Ազգ
Azg
16 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2010 ՇԱԲԱԹ 189 (4569)
ISSN: 1829-1651

# Հայաստանը՝ ՀԱՊԿ արագ արձագանքման ուժերի վարժանքների մասնակից

Այս տարվա հոկտեմբերի 23-28-ը ՌԴ Չելյաբինսկի մարզի Չեբարկուլսկի զորավարժարանում տեղ կունենան Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության Արագ արձագանքման ուժերի վարժանքները, որոնք կկրեն «Փոխգործակցություն-2010» անվանումը:

«Ռեգնում» գործակալության հաղորդմամբ, վարժանքներին մասնակցելու են Հայաստանի, Ռուսաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի եւ Տաջիկստանի զինծառայողները, իսկ Բելառուսը կմասնակցի դիտորդների միջոցով: Վարժանքների հրամանատար, ՌԴ ռազմադեսանտային ուժերի հրամանատարի տեղակալ գեներալ-մայոր Ալեքսանդր Լենցովը հայտնել է, որ վարժանքների առանձնահատկություններից է լինելու, որ բոլոր երկրների զինծառայողները մասնակցելու են միասնական համազգեստով: Ա. Հ.

# Հայաստանը կչեզոքացնի ադրբեջանցի դիպուկահարներին

«Հայաստանի պաշտպանության նախարարությունը ռազմադիվանագիտական եւ ռազմական համապատասխան միջոցառումներ է ձեռնարկելու՝ հայ-ադրբեջանական շփման գծում Ադրբեջանի զինված ուժերի դիպուկահարների գործունեությունը չեզոքացնելու համար»: Այդ մասին ասված է Հայաստանի ՊՆ-ի տարածած հաղորդագրության մեջ: Պաշտպանական գերատեսչությունն անդրադարձել է նախօրեին ադրբեջանցի դիպուկահարի կողմից զինծառայող Վիտալի Աշոտի Իգիթյանի սպանության փաստին՝ խստորեն դատապարտելով դիպուկահարների միջոցով հայ-ադրբեջանական շփման գծում իրադրությունը սրելու Ադրբեջանի արկածախնդրությունը: «Ադրբեջանի նման գործողությունները, որոնք իրականացվում են հակամարտության գոտում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների անցկացրած դիտորդական առաքելությունից անմիջապես հետո, ցույց են տալիս, որ Ադրբեջանը ոչ միայն չի հետեւում շփման գծից դիպուկահարներին հեռացնելու ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունի հորդորներին, այլեւ անտեսում է ադրբեջանցի դիպուկահարների կողմից նախկինում պատճառված զոհերի կապակցությամբ ԵԱՀԿ գործող նախագահի եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների մտահոգությունները՝ փորձելով ձախողել ղարաբաղյան հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու միջազգային հանրության ջանքերը», ասված է հաղորդագրության մեջ:

Նշենք, որ հոկտեմբերի 14-ին՝ ժամը 19:00-ի սահմաններում ղարաբաղա-ադրբեջանական զորքերի շփման գծի հարավարեւելյան հատվածում տեղակայված դիրքերից մեկի ուղղությամբ (Հադրութի պաշտպանական ուղղություն) հակառակորդի կողմից արձակված դավադիր գնդակից գլխի շրջանում ստանալով թափանցող հրազենային վերք՝ հոսպիտալ տեղափոխելու ճանապարհին մահացել է ՊԲ թիվ 38401 զորամասի զինծառայող, 1988թ. ծնված Վիտալի Աշոտի Իգիթյանը:

Հ. Ա.

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

# ԼՂՀ նախագահը պարգեւատրել է Ռուսաստանի հայերի միության անդամներին

Արցախի Հանրապետության նախագահ **Բակո Սահակյանը** երեկ ընդունել է Արցախ ժամանած Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ **Արա Աբրահամյանին**: Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության փոխանցմամբ, հանդիպման ընթացքում քննարկվել են Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի հետ փոխգործակցությանը վերաբերող հարցեր, մասնավորապես Արցախում իրականացվող ծրագրերի ընթացքն ու հեռանկարները: ԼՂՀ ղեկավարն ընդգծել է, որ համահայկական այդ կազմակերպությունները ակտիվ դերակատարություն ունեն հայոց անկախ պետականության ամրապնդման, արտերկրում բնակվող հայության ազգային ինքնության պահպանման, Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության ամրապնդման գործում: Բակո Սահակյանը նշել է, որ Արցախը շահագրգռված է էլ ավելի ընդլայնելու ու խորացնելու համագործակցությունը Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի հետ: Հանդիպմանը մասնակցել են Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Արցախի Հանրապետության փոխվարչապետ, ֆինանսների նախարար Սպարտակ Թեւոսյանը:

Նույն օրը Արցախի Հանրապետությանն ու ժողովրդին մատուցած ծառայությունների համար եւ հիմնադրման 10-ամյակի կապակցությամբ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը եւ կազմակերպության մի խումբ անդամներ, նախօրեին ԼՂՀ նախագահի ստորագրած հրամանագրերով պարգեւատրվել են ԼՂՀ պետական պարգեւներով: Պարգեւատրման արարողությանը ներկա են եղել Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, վարչապետ Արա Հարությունյանը, ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, պաշտոնատար այլ անձինք: Հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած բացառիկ քաջության ու անձնական արիության համար Ռուսաստանի հայերի միության վարչության անդամ, 1992-1994 թվականներին Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետ-պաշտպանության նախարարի տեղակալ, գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցը պարգեւատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով: Արցախի Հանրապետությանը մատուցած բացառիկ ծառայությունների համար Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանը պարգեւատրվել է «Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով: Արցախի Հանրապետության տնտեսության վերականգնման ու զարգացման գործում ունեցած ավանդի եւ բարեգործական նշանակալի գործունեության համար պարգեւատրվել են նաեւ Ռուսաստանի հայերի միության առաջին փոխնախագահ Գեորգի Տեր-Ղազարյանցը՝ «Վաչագան Բարեպաշտ» մեդալով, Ռուսաստանի հայերի միության վարչության անդամ, Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Առնոլդ Ադամյանը, Ռուսաստանի հայերի միության վարչության անդամ, բժշկական գիտությունների միջազգային ակադեմիայի ակադեմիկոս Հենրի Աղայանը, Ռուսաստանի հայերի միության փոխնախագահ, Համաշխարհային հայկական կոնգրեսի հայաստանյան մասնաճյուղի ղեկավար Վլադիմիր Աղայանն ու Ռուսաստանի հայերի միության վարչության անդամ, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Սամվել Գրիգորյանը՝ «Երախտագիտություն» մեդալով:

Հ. Ա.

# Ասուլիսի հրավեր



Ս.թ. հոկտեմբերի 15-ից մեկնարկել են Ռուսաստանի հայերի միության 10-ամյա հոբելյանին նվիրված «Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության օրերը Հայաստանում եւ Արցախում»: (Ծրագիրը՝ 3-րդ էջում)

**Հոկտեմբերի 18-ին, ժ.11.30** ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության դահլիճում տեղի կունենա **ՀՀԿ եւ ՌՀՄ նախագահ Արա Աբրահամյանի** մամուլի ասուլիսը /հասցեն՝ Բաղրամյան 24/:

Հրավիրում ենք լրատվամիջոցներին մասնակցելու ասուլիսին:

**Համաշխարհային հայկական կոնգրես**
**Ռուսաստանի հայերի միություն**

# Հացի մեջ պահանջվածից շատ բարելավիչներ են օգտագործվում

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայաստանում իրացվող հացի շուրջ 1\3-ը եւ հացաբուլկեղենի մինչեւ 40 տոկոսն անհայտ ծագում ունեն: Այս թվերը ստացվել են Սպառողների ազգային ասոցիացիայի անցկացրած մոնիտորինգով: Եթե հացը եւ, առհասարակ որեւէ մթերք, անհայտ ծագում ունի, ապա դրա որակի մասին խոսելն արդեն ավելորդ է: Նախկինում հացի վերահսկողությունն իրականացնում էր առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության որակի տեսչությունը, այսօր այդ գործառույթը կատարում է գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության տեսչությունը: Գերատեսչությունը շուրջ 2 տարի է փոխվել է, սակայն հացի որակը մնացել է նույնը: Սպառողների ազգային ասոցիացիայի նախագահ **Մելիսա Հակոբյանը** երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց, որ հացի, հացաբուլկեղենի եւ հրուշակեղենի խորացված ուսումնասիրությամբ սկսել են զբաղվել 2006 թվականից: «Այն ժամանակ հացի որակը սարսափելի էր: Հացի արտադրության մեջ օգտագործում էին անհայտ ծագումով բարելավիչներ, որոնք ներկրվում էին Թուրքիայից եւ Իրանից», ասաց Մելիսա Հակոբյանը: Վերջինիս փոխանցմամբ՝ հացի բարելավիչներն այսօր բերվում են Եվրոպայից, եւ դրանք ավելի որակով են, քան Թուրքիայից եւ Իրանից ներկրվածները: Բարելավիչների որակը լավացել է, սակայն չի լուծվում դրանց քանակի հարցը: Այսինքն՝ բարելավիչներն անկանոն են օգտագործվում: «Հիմա չեն հաշվում՝ քանի՞ կիլոգրամ հացին ինչքա՞ն բարելավիչ է հարկավոր: Ով ինչքան հասցնում է, շերեփով լցնում է, առանց կշռելու», երեկ «Արմաս» ակումբում նշեց Մելիսա Հակոբյանը:

Հացի մեջ պահանջվածից մի քանի անգամ ավելի շատ բարելավիչներ են օգտագործվում, իսկ բարելավիչը, ըստ Մելիսա Հակոբյանի՝ «Այդքան էլ անմեղ բան չէ»: Օրգանիզմում բարելավիչները կուտակումներն են առաջացնում եւ նպաստում տարբեր հիվանդությունների առաջացմանը:

*Տես էջ 3*

# ԱՄՆ-ում դանակներով հարձակվել են երեք հայի վրա

**Նյու Յորքի Բրուքլին թաղամասում հոկտեմբերի 14-ին մի խումբ անձինք՝ զինված մահակներով եւ դանակներով, հարձակվել են երեք հայերի վրա: Ոստիկանության տվյալներով, «դեպքի վայրում շատ արյուն է եղել»: «Տեղացի հայերից մեկը ժամը 18:40-ի սահմաններում հանդիպել է ընկերներին, եւ դրանից քիչ անց նրանց վրա հարձակվել են», տեղեկացնում է News.am-ը՝ հղում անելով New York Post-ին: Թերթի աղբյուրների փոխանցմամբ, վիրավորներին տեղափոխել են հիվանդանոց եւ, ամենայն հավանականությամբ, նրանց կյանքին ոչինչ չի սպառնում: Ոստիկանությունը միջադեպի մի քանի վարկած է քննարկում, այդ թվում՝ հարձակումը գումարի համար: Հ. Ա.**

# Մեղրու ՀԷԿ-ի կառուցման պայմանագիրը ստորագրվեց

Հայաստանի էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանն ու Իրանի էներգետիկայի նախարար Մաջիդ Նամջուն երեկ պայմանագիր ստորագրեցին Մեղրու ՀԷԿ-ի կառուցման աշխատանքները սկսելու վերաբերյալ:



Համաձայն ստորագրված համաձայնագրի՝ Արաքս գետի վրա նախատեսվում է կառուցել երկու ՀԷԿ՝ հայկական կողմում Մեղրու ՀԷԿ-ը, իրանական կողմում՝ Ղարաչիլար ՀԷԿ-ը: Մեղրու ՀԷԿ-ի հզորությունը կկազմի 130 մվտ եւ տարեկան կարտադրի մոտ 800 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա: Մեղրու ՀԷԿ-ի կառուցումը կարժենա 323 մլն դոլար: Շինարարությունը կֆինանսավորի իրանական կողմը՝ ներդրող ընկերությունն է «Ֆարադ-Սեպասարը»: Շինարարությունը կտեւի 5 տարի, որի ավարտից հետո՝ 15 տարվա ընթացքում, Մեղրու ՀԷԿ-ի արտադրած էլեկտրաէներգիան կտեղափոխվի Իրան: Այսինքն՝ հայկական կողմը արտադրված էլեկտրաէներգիայով կվճարի իրանական կողմին շինարարության ֆինանսավորման դիմաց: Շահագործման 15-րդ տարվա վերջին ՀԷԿ-ը անհատույց կհանձնվի հայկական կողմին: Նախատեսվում է, որ շինարարության մեջ ներգրավված կլինեն շուրջ 2 հազար մարդ, որոնք պետք է հնարավորինս տեղի բնակչությունից լինեն:

Ա. Մ.

ԱԶԳ

## Ընթացիկ

# Արցախի մայրաքաղաքը երբեք Խանքենդի չի կոչվել

## *Մտահոգություններ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հայտարարության առիթով*

ԵԱՀԿ Մինսկի խմբի վերջին հայտարարության վերաբերյալ երեկ քաղաքական ուժերից ՀՅԴ-ի եւ «Ժառանգության» ներկայացուցիչները են անհանգստություն հայտնել: ՀՅԴ Հայ դատի գրասենյակի ներկայացուցիչ **Կիրո Մանոյանը** մտահոգիչ է համարում «Լեռնային Ղարաբաղի շուրջը օկուպացված տարածքներ» ձեւակերպումը: Նա անհանգստացնող է համարել նաեւ ԼՂՀ մայրաքաղաքը «Ստեփանակերտ/Խանքենդի» կոչելը՝ արդեն երկրորդ հայտարարությունն է, Ստեփանակերտին զուգահեռ այդպիսի անուն է օգտագործվում: ՀՅԴ ներկայացուցիչը ենթադրում է, որ դաշտային առաքելության իրական նպատակը հայկական վերահսկողության տարածքներ ադրբեջանցի փախստականների վերադարձն է, մինչդեռ ոչ մի խոսք չկա հայ փախստականներին իրենց նախկին բնակավայրեր վերադարձնելու մասին: Ըստ «Ժառանգություն» խմբակցության ղեկավար **Ստյոպա Սաֆարյանի**՝ դաշտային առաքելությամբ բանակցային գործընթացում իրավիճակ է փոխվում: Նա համարում է, որ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նիստից Ադրբեջանի բանաձեւը հետ կանչելու պատասխանն է եղել դաշտային առաքելությունը: Իսկ առաքելությունն ամփոփող պատրաստվելիք ԵԱՀԿ ներքին զեկույցը, ըստ Ս. Սաֆարյանի, Ադրբեջանն անպայման կօգտագործի ՄԱԿ-ում կամ ԵԱՀԿ-ում: Նա եւս անթույլատրելի համարեց համանախագահների վերջին հայտարարության «Ստեփանակերտ/Խանքենդի» ձեւակերպումը՝ դա անվանելով մեր դիվանագիտական պարտություն: Ըստ Սաֆարյանի՝ բանակցային գործընթացը վտանգված է. «Իրավիճակի նոր շունչ է զգացվում, փորձ է արվում իմիտացիա ստեղծել, թե ամեն ինչ համաձայնեցված է, մնում է միայն իրականացնել համաձայնությունները»: Ըստ նրա՝ փոխվել է նաեւ ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի տերմինաբանությունն՝ ի վնաս Հայաստանի եւ Ղարաբաղի, որտեղ վերջին զեկույցում խոսք է գնացել, որ եթե նոր պատերազմ լինի, Հայաստանի միջամտության դեպքում կարող է հարված հասցվել մեր ատոմակայանին: Մի խոսքով՝ Ս. Սաֆարյանն այդ ամենին դիմակա՝ առաջարկում է իր կուսակցության համադարմանը՝ ԼՂՀ ճանաչումը, պարզ է, «Ժառանգության» օրինագծով:

Մտահոգություններ ունի նաեւ ԼՂՀ նախագահի խորհրդական **Դավիթ Բաբայանը**. ըստ նրա՝ «Ստեփանակերտ/Խանքենդի» բառակապակցությունը ճիշտ չէ, որովհետեւ Արցախի մայրաքաղաքը երբեք Խանքենդի չի կոչվել: Դա Ադրբեջանի հակաօրինական որոշումն է եղել, որով նա սկսել է վերանվանել Արցախի բոլոր բնակավայրերն ու շրջանները: Ըստ Բաբայանի՝ այդպիսի բառակապակցության օգտագործումն արդեն բացասական իմպուլս ունի իր մեջ բանակցային գործընթացի համար: Իսկ «գրավյալ» անվանված տարածքների վերաբերյալ Դ. Բաբայանն ասել է, որ այդ տարածքները Ղարաբաղում չեն համարում այսօր ոչ օկուպացված, ոչ բուֆերային, ոչ ազատագրված: Դրանք ԼՂՀ տարածքներն են՝ ամրագրված երկրի սահմանադրությամբ: Մինչդեռ ՀՀԿ-ական Արտակ Զաքարյանն առաջարկում է ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարությանը նորմալ վերաբերվել՝ ընդամենը առաքելության ընթացք է ներկայացվել, քանի որ Մինսկի խումբը կարգավորման ողջ ընթացքում միջնորդական առաքելությունը փորձում է հավասարակշռության մեջ պահել, բանակցությունները շարունակվում են, միջնորդներն էլ ստիպված են օգտագործել որոշ պայմանական ձեւակերպումներ՝ մինչեւ ԼՂՀ ինքնորոշման իրավունքի լիարժեք իրացումն ու անկախ պետականության կարգավիճակի միջազգային ճանաչումը: Նա հույս է հայտնել, որ ԵԱՀԿ Մինսկի խումբն, ի դեմս համանախագահների, իր որդեգրած սկզբունքը (բնակավայրերի կրկնակի անունների օգտագործումը) կտարածի նաեւ Ադրբեջանի օկուպացրած ղարաբաղյան տարածքների ապագա դիտարկումների վերաբերյալ ապագա հայտարարություններում:

**Մ. Խ.**

# ԵՄ-ի ողջույնը Սոցիստերնին

Եվրոմիությունը ողջունում է Ադրբեջանի եւ Հայաստանի քաղաքական ուժերի շփումները: Ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, նման հայտարարություն է արել Ադրբեջանում ԵՄ ներկայացուցչության ղեկավար Ռոլանդ Կոբիան մեկնաբանելով Բաքվում Սոցինտերնի նիստի շրջանակներում Հայաստանի եւ Ադրբեջանի քաղաքական ուժերի շփումները:

«Հասկանալի է, որ Ադրբեջանի համար բարդ փուլ է, հակամարտությունը տեղի է ունենում նրա տարածքում: Մենք լիովին հասկանում ենք հակամարտության մեջ ներգրավված մարդկանց տառապանքները: ԵՄ-ն փորձում է անել հնարավոր ամեն ինչ փոխադարձ վստահություն ստեղծելու համար: Կարծում ենք, որ չնայած տեղի ունեցածին, միայն երկխոսության միջոցով կարելի է լուծել հակամարտությունը», ասել է Կոբիան:

Շաբաթվա սկզբին Դաշնակցության երկու ներկայացուցիչներ մեկնել էին Բաքու մասնակցելու Սոցինտերնի տարածաշրջանային միջոցառմանը: Ավելի վաղ Պոտսդամում Հարավային Կովկասի լիբերալ կուսակցությունները ժողովրդավարության համար պայքարելու համատեղ հայտարարություն էին ստորագրել: Փաստաթղթի տակ իրենց ստորագրություններն էին դրել Հայոց համազգային շարժումն ու «Մուսավաթ» կուսակցությունը:

Այդուհանդերձ, ԵՄ ներկայացուցիչն իրեն ավելին է թույլ տվել՝ հակամարտությունը ներկայացնելով որպես «Ադրբեջանի տարածքում տեղի ունեցող»: Կամ էլ, ինչն ավելի հավանական է, հերթական անգամ ցանկությունը որպես իրականություն են ներկայացրել ադրբեջանական լրատվամիջոցները:

**Ա. Հ.**

# Մեկնարկեց Orange Expo նորարարությունների ցուցահանդեսը

**Orange-ի գլխավոր խանութի տորին հարկում տեղակայված հատուկ ցուցասրահում կարելի է այցելել նորարարական ապրանքների եւ ծառայությունների Orange Expo ցուցահանդեսը, որը բաց կլինի բոլոր այցելուների համար հոկտեմբերի 15-17-ը:**

**«Orange-ը Հայաստանում, ինչպես ամենուր, ներկայանում է որպես նորարար բրենդ եւ մենք այսօր երջանիկ ենք Հայաստանում ներկայացնել Orange Ֆրանս Տելեկոմի լաբորատորիաներում մշակված այս տպավորիչ նմուշները: Մեր ընկերության համար տեխնոլոգիաները չեն նորարարության նպատակը, այլ բաժանորդը: Մենք կարծում ենք, որ օգտագործողները չպետք է մտածեն տեխնոլոգիաների բարդության մասին, իսկ նորարարությունները պետք է ծառայեն մեր հաճախորդների կյանքն ավելի հարմարավետ, ավելի գունագեղ ու պարզապես ավելի լավը դարձնելու համար», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն Բրունո Դյութուան:**




**«Այս ցուցասրահում ներկայացված են ինչպես ապրանքներ եւ ծառայություններ, որոնք դեռ չեն գործարկվել Հայաստանում եւ մեզ համար ապագայի չափանիշն են, այնպես էլ ծառայություններ, որոնք արդեն մեր ընկերությունը ներկայացնում է հայաստանյան սպառողին, սակայն դեռ չեն մեկնարկել եվրոպական երկրներում: Այս վայրում մենք իսկապես ապագայի ու ներկայի սահմանագծին ենք, եւ պատահական չէ, որ ցուցահանդեսի կարգախոսն է «ապագան այսօր է», ասաց Orange-ի մարկետինգի տնօրեն Արամ Մկրտչյանը:**

**Orange Expo ցուցահանդեսում ներկայացված են նմուշներ Orange-ի գիտահետազոտական լաբորատորիաների՝ Orange Labs-երի ամենաhետաքրքիր ապրանքներից եւ ծառայություններից, այնպես էլ Orange Արմենիայի պորտֆոլիոյից: Ցուցահանդեսը բաց կլինի ժամը 13:00-ից 21:00:**

ՀԱՆՐԱՀԱՎԱՔ

# Կաշառակերությունը գլխավոր թեման էր

Աշունը կիսող օրը՝ հոկտեմբերի 15-ին, անձրեւոտ Երեւանի Մատենադարանին հարակից տարածքում ՀԱԿ-ը անցկացրեց հերթական հանրահավաքը, որը, ինչպես նախօրոք խոստացվեց՝ «Հաշվի առնելով եղանակային պայմանները՝ կտեւի կարճ, ավելի կարճ, քան սպասում եք», նշեց ՀԱԿ համակարգող **Լեւոն Զուրաբյանը**: Ելույթ ունեցողները գրեթե նույնն էին, թեմաները՝ նույնպես, միայն թե եղանակային կամ «բովանդակային» պատճառներով, ընդդիմության հանրահավաքներին մասնակից մարդկանց թվերն էին անընդհատ տարբերվում. երեկ, օրինակ, Մատենադարանի հրապարակը բավական սակավամարդ էր:

Առաջին նախագահի **Լեւոն Տեր-Պետրոսյանի** ելույթն այս անգամ ամբողջովին վերաբերում էր կոռուպցիային: Տեր-Պետրոսյանը, վկայակոչելով «մոսկովյան մամուլը», նույնիսկ որոշ անուններ ներկայացրեց՝ բնականաբար հանրապետության քաղաքական ամենաբարձր էլիտայից, որոնք կոռումպացված են: Ինչեւէ, ՀԱԿ-ի հերթական հանրահավաքը, որը մեկնարկեց ժամը 18-ին, ժամը 20-ին մոտ արդեն ավարտված էր: Հաջորդն, ըստ համակարգող Զուրաբյանի, կկայանա հոկտեմբերի 19-ին: Ընդ որում այդ օրը՝ ժամը 12-ից կկազմակերպվի նաեւ պիկետ կառավարական հյուրատան մոտ (Մատենադարանի մերձակայքում), որտեղ այդ օրն անցկացվելու է Եվրոպայի խորհրդի ժողովրդավարության հարցերով խորհրդաժողով, որին մասնակցելու է ԵԽ-ում Հայաստանի հարցով համազեկուցող Պրեսկոտը: Իսկ արդեն ժամը 18-ին տեղի կունենա հանրահավաք, որից հետո ցուցարարները, համաձայն Զուրաբյանի խոսքերի, կշարժվեն դեպի «Ազատության» հրապարակ:

**Հ. Ա.**

ԳՅՈՒՄՐԻ

# «Գերմանական շաբաթն» ավարտվեց

**Գերմանիայի վերամիավորման 20-ամյակին էր նվիրված հոկտեմբերի 5-ից 12-ը Գյումրիում անցկացված գերմանական մշակույթի շաբաթը, որը կազմակերպել էին Հայաստանում այս երկրի դեսպանությունը եւ Գյոթեի ինստիտուտը: Անցկացված բազմատեսակ միջոցառումներից առաջինի՝ Բեռլինի պատի քանդման ու հետագա իրադարձությունները ներկայացնող լուսանկարչական ցուցահանդեսի բացման մասին «Ազգը» տեղեկացրել է: Ցուցահանդեսը հյուրընկալած Գյումրու 25-րդ հանրակրթական դպրոցը Գերմանիայի դեսպանատան հետ բազմաթիվ ծրագրեր ունի իրականացրած, որոնցից մեկը դպրոցականների փոխանակման ծրագիրն է: Շաբաթի հիմնական իրադարձություններից մեկը եղավ քաղաքի մեկ այլ՝ 3-րդ ավագ դպրոցի եւ Գյոթեի ինստիտուտի միջեւ համաձայնագրի կնքումը, կրթօջախի ընդգրկումը «Դպրոցներ՝ ապագայի գործընկերներ» ծրագրում: Այդ ծրագրով դպրոցին Մյունխենի Գյոթեի ինստիտուտի գործընկերոջ կարգավիճակի շնորհումը մասնավորապես նախատեսում է այստեղ ժամանակակից տեխնիկական հագեցվածությամբ համանուն լսարանի բացում՝ գերմանական որոշ դպրոցների հետ հեռահաղորդակցման միջոցով շփման հնարավորությամբ, կրթաթոշակների տրամադրում, լավագույն շրջանավարտներին Գերմանիայում ուսանելու հնարավորության ընձեռում եւ այլն: Այս դպրոցում բացվել է նաեւ ճարտարապետական կառույցների վերաբերյալ ցուցահանդես՝ «Տեղական ժամանակ» խորագրով:**

**Շաբաթվա միջոցառումներից մեկը եղել է Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտում նախկին Գերմանական Դեմոկրատական Հանրապետության առօրյան ներկայացնող ցուցահանդեսը, որի բացմանը հաջորդել են ֆիլմերի ցուցադրություններ (? ) — ֆինարկումներ Արեւմտյան եւ Արեւելյան Գերմանիաներում ծնված ու մեծացած գերմանացիների եւ ներկա ուսանողների միջեւ, ներկայացվել է այս երկրում գործող Ակադեմիական փոխանակման ծառայության գործունեությունը: «Գերմանական շաբաթ»-ի ծրագիրն ընդգրկել է նաեւ ֆուտբոլային մրցաշար Սարդարապատի, Երեւանի եւ Գյումրու՝ Գերմանիայի կողմից հովանավորվող դպրոցների աշակերտների մասնակցությամբ: Գյոթեի ինստիտուտի աշխատակցուհի, մանկական գրքերի հեղինակ Թամարա Բախը հանդես է եկել իր ստեղծագործությունների ընթերցմամբ, «Հոկտեմբեր» կինոթատրոնում ելույթ է ունեցել գերմանացի երաժիշտ Դայկոն:**

**Գ. Մ.**

# Սողանք եւ փլուզում

Վերջին օրերին տեղացած հորդառատ անձրեւներից հետո Սյունիքի մարզի Քարահունջ գյուղին հարակից տարածքում ակտիվացել են սողանքները: Քարահունջի գյուղապետի ահազանգից հետո դեպքի վայր է մեկնել Գորիսի հրշեջ-փրկարար ծառայության օպերատիվ խումբը: Տեղում պարզվել է, որ գահավիժել են մոտ 300 տ ժայռաբեկորներ՝ փլուզելով որպես անասնագոմ օգտագործվող քարանձավը: Փլուզման հետեւանքով սատկել է 1 կով, քարածածկվել է 400 հակ անասնակեր:

**Մ. Մ.**

# Կարգալույծ քահանա

Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Դավիթ աբեղա Քարամյանը՝ եկեղեցական ծառայությունից հրաժարվելու մասին խնդրագրի հիման վրա:

Կարգալույծ հռչակված հոգեւորականն այսուհետեւ կդասվի աշխարհականների շարքը եւ կկոչվի ավազանի անունով՝ Կարեն Քարամյան:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ **Անցուդարձ**

# «Ամերիաբանկը» ավելի լավ կկառավարի իր ռիսկերը

## *Շնորհիվ IFC-ի հետ կնքած համաձայնագրի*

Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC) եւ հայկական «Ամերիաբանկը» երեկ ստորագրեցին միջազգային սվոպերի եւ ածանցյալ գործիքների միավորման հիմնական համաձայնագիրը, որը լրագրողներին ներկայացրին IFC-ի կովկասյան տարածաշրջանի ղեկավար **Թոմաս Լյուբեքը**, «Ամերիաբանկի» զարգացման գծով տնօրեն **Տիգրան Ջրբաշյանը** եւ ներդրումային բանկային գործառնությունների գծով տնօրեն **Անդրեյ Շինկեւիչը**:



Անդրեյ Շինկեւիչը նշեց, որ «Ամերիաբանկը» ընդլայնում է համագործակցությունը IFC-ի հետ, եւ այս համաձայնագիրը ռիսկերի նվազեցմանն է ուղղված: Այսինքն՝ հնարավորություն կտա բանկին ավելի լավ կառավարելու ռիսկերը:

Թոմաս Լյուբեքը նույնպես ընդգծեց, որ այս համաձայնագիրը թույլ կտա «Ամերիաբանկին»՝ ավելի լավ կառավարել ռիսկերը, ինչը կարեւոր է հատկապես ճգնաժամի ժամանակ: Ըստ IFC-ի կովկասյան տարածաշրջանի ղեկավարի, նման գործարքներ միջազգային այս կազմակերպությունը կնքել է 22 երկրներում, այդ թվում՝ Ռուսաստանում եւ Վրաստանում: Հայաստանում կնքվում է առաջին անգամ՝ «Ամերիաբանկի» հետ:

Թե ի՞նչ է միջազգային տոկոսադրույքների եւ արժութային սվոպերի համաձայնագիրը՝ հագամանորեն ներկայացրեց Տիգրան Ջրբաշյանը: Նա մասնավորապես ասաց, որ Հայաստանի բանկերը, բացի ավանդներից, միջոցներ են ներգրավում նաեւ միջազգային կազմակերպություններից, որոնց տոկոսադրույքները լողացող են: Դրանք փոփոխվում են միջազգային շուկայում կատարվող փոփոխություններին համարժեք, եւ տարեկան երկու անգամ այդ տոկոսադրույքները վերանայվում են: Մինչդեռ տնտեսվարողներին բանկերը վարկեր տալիս են ֆիքսված տոկոսադրույքներով, եւ որպեսզի այդ գործարքում բանկի կորուստների ռիսկը նվազի, «Ամերիաբանկը» կնքել է այս պայմանագիրը IFC-ի հետ: Վերջինս, որոշակի վճարի դիմաց, իր վրա է վերցնում լողացող տոկոսադրույքների ռիսկը եւ «Ամերիաբանկից» ստանում ֆիքսված տոկոսներով վճարումներ: Դրանով, ըստ Տիգրան Ջրբաշյանի, բանկի ռիսկերը չեզոքացվում են:

Ի դեպ, «սվոպ» նշանակում է «փոխանակում»: «IFC-ն ինչո՞ւ է այդ ռիսկը վերցնում իր վրա» հարցին այն պատասխանը տրվեց, որ IFC-ն էլ միջոցներ է ներգրավում միջազգային շուկաներից լողացող, բայց ավելի ցածր տոկոսադրույքներով, հետեւաբար նա կարողանում է բանկերի ռիսկը վերցնել իր վրա:

«Սա լրացուցիչ հնարավորություն է լինելու մրցունակ եւ բավարարելու մեր հաճախորդների պահանջները», վերջում նշեց «Ամերիաբանկի» ներդրումային բանկային գործառնությունների գծով տնօրեն Անդրեյ Շինկեւիչը:

**Ա. Մ.**

# Հացի մեջ պահանջվածից շատ բարելավիչներ են օգտագործվում

*1-ին էջից*

Եթե որեւէ երկրի կենսամակարդակը ցածր է, ապա տվյալ երկրի բնակչությունը ե՛ւ շատ հաց է ուտում, ե՛ւ շատ ծխում է: Մելիսա Հակոբյանի խոսքով՝ 1 ճաշի ընթացքում եվրոպացին օգտագործում է 50-100 գրամ հաց, իսկ հայ մարդը՝ 300-400 գրամ: Հայաստանում ազգաբնակչությունը հաց շատ է ուտում: Նախաճաշելիս, ճաշելիս եւ ընթրելիս ասում ենք՝ «Նստենք հաց ուտելու», առանց հացի սեղան չենք նստում, իսկ սեղանին դրված հացն էլ պատրաստված է անհայտ քանակությամբ բարելավիչներից եւ , Աստված գիտի, ինչ պայմաններում: «Մեր ամենացավոտ կողմը այն է, որ ոչ մի հաց չի մակնշվում, հացի գներն էլ քիչ խանութներում են գրված: Այս մասին գյուղատնտեսության նախարարությանը մի քանի անգամ տեղյակ ենք պահել»: Չնայած Սպառողների ազգային ասոցիացիան հացի մակնշման հարցով դիմել է գյուղ. նախարարությանը, բայց, ինչպես տեսնում ենք, սայլը տեղից չի շարժվում: «Ամեն մի մթերքի համար պետք է անձնագրավորում մշակել», նշեց Մ. Հակոբյանը:

Սպառողների ազգային ասոցիացիայի մարկետինգի մոնիտորինգի բաժնի պետ **Ֆրունզե Հայթյանն** էլ նշեց, որ Հայաստանում կան նաեւ ստվերում գործող հաց արտադրողներ: Սա արդեն հարկային մարմինների խնդիրն է, որպեսզի այդ արտադրողներին «ջրի երես հանեն»: Եթե խանութում հաց վաճառողից փորձենք իմանալ, թե իր վաճառած հացը որտե՞ղ եւ ո՞վ է արտադրել, ապա կտեսնենք, որ շատ վաճառողներ այդ մասին պատկերացում էլ չունեն: «Եթե կարողանանք նորմալ վերահսկել մեր արտադրությունները ու տեսնել՝ արտադրանքն ինչպե՞ս է արտադրամասից խանութ հասնում, կկարողանանք նաեւ ինչ-որ բան փոխել», ասաց Մ. Հակոբյանը: Սպառողների ազգային ասոցիացիան դիմել է կառավարությանը, որպեսզի հացի արտադրությունը պարզ ընթացակարգից անցնի բարդ ընթացակարգի: Մ. Հակոբյանը հավելեց, որ արտադրողը պետք է հետեւի սանիտարական նորմերին. «Ով պատահի՝ հաց է արտադրում, չգիտենք՝ տվյալ մարդը հիվա՞նդ է, թե՞ ոչ»:

Բանախոսներն ասուլիսն ավարտեցին այնպիսի հոռետեսությամբ, ինչից կարելի է հետեւություն անել, որ բարձրորակ հացին դեռ պետք է երկար սպասենք:

ՌՀՄ-10

# Ծրագիր

**«Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի օրերը Հայաստանում եւ Արցախում-2010»**

**Հոկտեմբեր, 2010թ.**

*(2010թ. ծրագիրը նվիրվում է Ռուսաստանի հայերի միության 10-ամյակին)*

**Հոկտեմբերի 15 – 16 (ուրբաթ - շաբաթ)**

ՌՀՄ եւ ՀՀԿ պատվիրակության անդամների ուղեւորություն ԼՂՀ (առանձին ծրագրով):

**Հոկտեմբերի 17 (կիրակի)**

ՌՀՄ եւ ՀՀԿ պատվիրակության անդամների ուղեւորություն ք.Գյումրի, այցելություն Պատվո Բլուր:

**Հոկտեմբերի 18 (երկուշաբթի)**

**10:30** «Ռուսաստանի հայերի միության հրատարակչական գործունեությունը» գրքերի ցուցահանդեսի բացում: *Արարողությունը տեղի կունենա ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում*

**11:30** ՌՀՄ եւ ՀՀԿ ղեկավարության մամլո ասուլիս *Մամլո ասուլիսը տեղի կունենա ՀՀ ԳԱԱ Նախագահության դահլիճում:*

**12:30** Ռուսաստանի հայերի միության 10–ամյա գործունեությանը նվիրված ֆիլմի ցուցադրություն:

**13:00** Լավագույն գիտական եւ ստեղծագործական աշխատանքների, ինչպես նաեւ «Հայոց ազգային ինքնության պահպանման գործում ներդրած մեծ ավանդի համար» մրցույթների հաղթողների պարգեւատրման արարողություն: *Արարողությունը տեղի կունենա ՀՀ ԳԱԱ Մեծ դահլիճում:*

**14:00** Պարգեւատրման արարողության մասնակիցների համար ֆուրշետ:

**18:30** Դպրոցականների եւ ուսանողների շրջանում անցկացվող «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» նշանաբանով լավագույն գրական ստեղծագործությունների 6-րդ միջազգային մրցույթի հաղթողների պարգեւատրման արարողություն: *Միջոցառումը տեղի կունենա Երեւանի «Մոսկվայի Տուն» մշակութա-գործնական կենտրոնում, հասցե՝ Արգիշտի 7:*

**Հոկտեմբերի 19 (երեքշաբթի)**

**9:00** ՌՀՄ պատվիրակության անդամների խմբի ուղեւորություն ՀՀ Լոռու մարզի Ֆիոլետովո եւ Լերմոնտովո գյուղեր:

**10:00** «Հանդիպումներ ըստ հետաքրքրությունների» - հայ բժիշկների եւ Ռուսաստանի առողջապահության բնագավառում հայտնի բժիշկների միջեւ, հայ գրողների եւ վերջիններիս ռուս գործընկերների միջեւ, հայ լրագրողների եւ Ռուսաստանից ժամանած լրագրողների միջեւ (առանձին ծրագրով):

**11:00** Պատվիրակության անդամների կողմից պսակադրման արարողություն Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում:

**12:30** Պատվիրակության անդամների մասնակցություն Հայաստանի հանրակրթական դպրոցների աշակերտության շրջանում անցկացվող «Երգը բարեկամության կամուրջ է» ռուսական երգի հանրապետական փառատոնի միջոցառումներին՝ Երեւանի, Չարենցավանի եւ Գյումրու դպրոցներում:

**18:30** Երեկո՝ նվիրված «Ճանաչենք այն երկրները, որտեղ ապրում են հայերը» շարքից «Արարատից՝ Հայկական նրբանցք, տուն 2, ք. Մոսկվա» խորագրով միջոցառմանը: *Միջոցառումը տեղի կունենա Երեւանի «Մոսկվայի Տուն» մշակութա-գործնական կենտրոնում, հասցե՝ Արգիշտի 7:*

**Հոկտեմբերի 20 (չորեքշաբթի)**

**10:00** Պատվիրակության անդամների մասնակցություն ՌՀՄ եւ ՀՀԿ Երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիայի նախաձեռնած ծառատունկին՝ նվիրված Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին (առանձին ծրագրով):

**11:00** ՌՀՄ ղեկավարության հանդիպում Հայաստանում Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ վարչության Արտաշատի սահմանապահ ջոկատի ղեկավարության հետ:

**14:00** Հայաստանի հանրակրթական դպրոցներում անցկացվող «Երգը բարեկամության կամուրջ է» ռուսական երգի փառատոնի շրջանակներում անցկացվող միջոցառում N 93 դպրոցում, ք. Երեւան: Համակարգչային դասարանի բացում N 93 դպրոցում, ք. Երեւան:

**18:30** Հոբելյանական երեկո եւ տոնական համերգ՝ նվիրված Ռուսաստանի հայերի միության 10-ամյակին (առանձին ծրագրով) *Միջոցառումը տեղի կունենա Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում:*

# Հյուրընկալվեց ու հետո մահացու դանակահարեց

Հոկտեմբերի 14-ի ժամը 15.50-ին Նոր Նորքի շտապօգնության 5-րդ ենթակայանից ոստիկանությանը հայտնել են, որ Նոր Նորքի 2-րդ զանգվածի Բագրեւանի փողոցի 1-ին շենքի բնակարաններից մեկում դանակի հարվածներից մահացել է 1978 թ. ծնված Վադիմ Անդրեասյանը: Իսկ թե ինչն է եղել դանակահարության պատճառը, կպարզվի հետագայում: Առայժմ հայտնի է դարձել, որ 36 տարեկան Վլադիսլավ անունով մեկը 32-ամյա երիտասարդին, ընտանիքի հորը հյուրընկալվելուց, հյուրասիրվելուց հետո աննկատ հեռացել է, իսկ տանտիրոջը գտել են մահացու դանակահարված: Ձեռնարկված օպերատիվ միջոցառումների շնորհիվ, դեպքից 3 ժամ անց Կոմիտասի պողոտայից սպանություն կատարելու կասկածանքով բերման է ենթարկվել նախկինում չորս անգամ ազատազրկման դատապարտված Վլադիսլավ Եդիգարովը: Վերջինս ցուցմունք է տվել, որ այդ օրը ընկերոջ տանը, վիճաբանության ժամանակ դանակով մի քանի հարված է հասցրել Վադիմ Անդրեասյանին ու սպանել:

Վլադիսլավ Եդիգարովը ձերբակալված է, կատարվում է նախաքննություն:

**Ա. Մ.**

# «ՎիվաՍել-ՄՏՍ»-ն՝ եվրոպական «Պատվո ժապավենի» մրցանակակիր

**Ինչպես տեղեկացանք «Վիվասել-ՄՏՍ»-ից, հայաստանյան երեք ընկերություն՝ «Վիվասել-ՄՏՍ»-ն, «Իննովա սոլյուշնը» եւ «Վիստաա պլյուսը» արժանացել են «Էյչ-Էս-Բի-Սի-ի» կողմից հովանավորվող «Եվրոպական բիզնես մրցանակաբաշխություն - 2010»-ի (ԵԲՄ) «Պատվո ժապավենի» (Ruban dHonneur):**

**Այս մրցանակաբաշխությունը կազմակերպվում է արդեն 4-րդ տարին եւ Եվրոպայում համարվում է բիզնես նորարարության, հաջողության ու կայունության խորհրդանիշ: Մրցանակը տարբեր ոլորտներ ներկայացնող բիզնեսներին հնարավորություն է ընձեռում ինը անվանակարգում եվրոհամայնքին ներկայացնելու իրենց երկիրը:**

**Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստանի առեւտրավարկային վարչության կառավարիչ Արամ Փինաջյանը մեկնաբանել է. «Հպարտ եմ մրցանակաբաշխությանը ներկայացված բարձրակարգ կազմակերպությունների շարքում Հայաստանը ներկայացնող բիզնեսներ տեսնելու համար»:**

**«Հաղթող 100 կազմակերպություններն աննախադեպ ունակություններ, նորարարություն եւ բիզնես ջիղ են դրսեւորել մրցանակներին արժանանալու համար», ընդգծել է ԵԲՄ հիմնադիր Ադրիան Թրիփը:**

**Հաղորդագրությունից տեղեկացանք նաեւ, որ «Պատվո ժապավենի» բոլոր մրցանակակիրները հրավիրված են Փարիզի «Վեսթին» հյուրանոցում նոյեմբերի 16-ին կայանալիք եվրոպական բիզնես մրցանակաբաշխության գալա ընդունելությանը, որի ընթացքում էլ Եվրոպայի առաջատար բիզնես առաջնորդների, քաղաքական գործիչների, ձեռներեցների, բիզնես վերլուծաբանների եւ զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների ներկայությամբ կհանձնվեն մրցանակները:**

**Մրցանակակիր դառնալու առնչությամբ «Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը նշել է. «Պատվո ժապավենը» կարեւոր նվաճում է, որը «Վիվասել-ՄՏՍ»-ն նվիրում է Հայաստանին: Մենք առաջնորդվում ենք սեփական օրինակով եւ ցանկանում ենք, որ յուրաքանչյուր կազմակերպություն իր իսկ օրինակով ցույց տա այն լավագույնը, որ կա մեր երկրում: «Վիվասել-ՄՏՍ»-ն հայաստանյան ընկերություն է եւ հպարտ է դրանով: Ruban dHonneur մրցանակը մեզ համար նոր ձգտումների եւ ավելին առաջարկելու մարտահրավեր է: Տեղական առանձնահատկություններով միջազգային օպերատոր «Վիվասել-ՄՏՍ»-ն առաջնորդվում է նորարարության, որակ ապահովելու եւ առաջնորդելու վճռականությամբ»:**

**Ա. Մ.**

# ՏՏ ոլորտի զարգացումը կախված է նոր գաղափարների կիրառումից

## *Դրանք հնարավոր է գտնել «Դիջիտեքում»*

Տեղեկատվական տեխնոլոգիաները (ՏՏ) Հայաստանի տնտեսության միակ ճյուղն էին, որ անցյալ՝ տնտեսական ճգնաժամի տարում, երբ տնտեսական անկումը 14,4 տոկոսի հասավ, ոչ միայն անկում չունեցավ, այլեւ արձանագրեց էական՝ 17 տոկոս աճ: Այս ցուցանիշը եւս մեկ վկայություն էր, որ ՏՏ ոլորտը լուրջ ներուժ եւ հեռանկարներ ունի զարգանալու եւ ձեւավորելու տեղեկատվական հասարակություն:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում իրականացվող առավել նշանակալի միջոցառումներից է ամենամյա «Դիջիտեք» տեղեկատվական եւ հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ցուցահանդեսը, որն առաջին անգամ անցկացվել է 2005-ին: Այն տեղի է ունենում Հայաստանի վարչապետի հովանու ներքո, իսկ կազմակերպում է Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը: Այս տարի, արդեն 6-րդ Digitec expo ցուցահանդեսը տեղի կունենա հոկտեմբերի 29-31-ը: Որո՞նք են այս ցուցահանդեսի առանձնահատկությունները, ի՞նչ սպասելիքներ կան ՏՏ ոլորտից ընդհանրապես: Այս հարցերով տեսակետ հայտնելու խնդրանքով դիմեցինք ոլորտի Հայաստանի առաջատար ընկերություններից մեկի՝ «Սինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն **Հովիկ Մուսայելյանին** եւ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող Մրցունակ մասնավոր հատված ծրագրի (CAPS) տնօրեն **Արտակ Ղազարյանին**:

Ըստ «Սինոփսիս Արմենիայի» ղեկավարի դիտարկման՝ այս տարի «Դիջիտեքին» մասնակից ընկերություններն ավելի մեծ լրջությամբ են մոտենում ցուցահանդեսին: Բացի այդ, տարեցտարի ավելանում է մասնակիցների թիվը: «Այսինքն՝ չկա ընկերություն, որ ասի, թե մասնակցել եմ նախորդ տարիների համաժողովներին, բայց այս անգամ չեմ ցանկանում մասնակցել», վստահեցրեց Հովիկ Մուսայելյանը, ավելացնելով, որ ինքը կարեւորում է նմանատիպ միջոցառումների անցկացումը, հաշվի առնելով, որ այն տարվա կարեւորագույն միջոցառումներից մեկն է: Կոնկրետ իր ղեկավարած ընկերության համար այս «Դիջիտեքն» ավելի շատ վարկանիշային նշանակություն ունի, քանի որ ներկայացնելու է, թե ի՞նչ առաջընթաց է ունեցել անցած տարվա ցուցահանդեսից մինչեւ այս տարվա ցուցահանդես ընկած ժամանակում, եւ թե Հայաստանում ի՞նչ զարգացում է ապրել ոլորտը: Մասնավորապես, այդ ընթացքում «Սինոփսիս Արմենիայի» աշխատակիցների թիվը 370-ից հասել է 520-ի: Դա հիմնականում այլ ընկերության ձեռքբերման հաշվին է իրականացել, որը նույնպես լուրջ ցուցանիշ է: Երկրորդ՝ ընկերությունը ԱՄՆ պետդեպարտամենտի կողմից այս տարի ճանաչվել է աշխարհի լավագույն 12 ընկերություններից մեկը, որը չափազանց կարեւոր է ե՛ւ Հայաստանի համար, ե՛ւ «Սինոփսիս Արմենիայի» համար: «Լինելով 25 տարվա ընկերություն եւ ներկայացված լինելով մոտ 50 ընկերություններում, ոչ մի երկրում նման հաջողություն չի ունեցել: Դա մեր նպատակաուղղված աշխատանքի արդյունքն է, որը եւս կներկայացնենք ցուցահանդեսում: Դա կարծիք կձեւավորի, որ երկրում այս ոլորտը զարգացումներ ունի, քանի որ հնարավոր չէ, որ երկրում հետընթաց լինի, բայց մեկ ընկերություն կտրուկ զարգացում արձանագրի», ասաց «Սինոփսիս Արմենիայի» գլխավոր տնօրենը:

Հովիկ Մուսայելյանը եւս մեկ գործոն է շատ կարեւորում՝ տարեցտարի երիտասարդների հոսքի աճ այս ցուցահանդեսում: «Ես սա ավելի շատ եմ կարեւորում, քան ընդհանուր մասնակիցների թվի աճը: Եթե երիտասարդների քանակը շատանում է նման միջոցառումների ժամանակ, ուրեմն մենք առաջ ենք շարժվում տեղեկատվական հասարակություն ձեւավորելու ուղղությամբ», համոզմունք հայտնեց նա: Միաժամանակ, Հովիկ Մուսայելյանը կարծիք հայտնեց, որ նկատի ունենալով այս ոլորտի կարեւորությունը եւ այս ոլորտում անցյալ տարի արձանագրված բարձր աճը, ճիշտ կլինի, որ կառավարությունն ավելի շատ գումարներ հատկացնի նմանատիպ միջոցառումների իրականացմանը:

Մրցունակ մասնավոր հատված ծրագրի (CAPS) տնօրեն Արտակ Ղազարյանի կարծիքով՝ «Դիջիտեքն» այն տեղն է, որտեղ հնարավոր է գտնել տնտեսության տարբեր ճյուղերում կիրառելի նոր գաղափարներ եւ նոր լուծումներ: Այդ առումով նա կարեւոր համարեց սկսնակ ընկերություններին աջակցելը՝ մասնակցելու այդ ցուցահանդեսին, ինչն իրականացնում է ծրագիրը:

«Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում եւս այս ոլորտը պետք է առաջ տանեն երիտասարդ մասնագետները, ովքեր շատ հաճախ դուրս են մնում մրցակցությունից, քանի որ չեն համարձակվում ձեռնարկել նոր գործ՝ գործարարություն սկսելու խնդիրներից վախենալով: Գրեթե բոլոր փայլուն նախաձեռնությունները աշխարհում առաջ են եկել երիտասարդ կադրերի շնորհիվ, որոնք աջակցություն են վայելել ու ունեցել են ստեղծագործական ազատություն», փաստեց Արտակ Ղազարյանը: Նա նաեւ ավելացրեց, որ CAPS-ը փորձում է ստեղծել Start up ընկերությունների շարժում, քանի որ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգով նախատեսված 2018-ին 1000 ընկերություն ունենալու նպատակը իրականություն դառնալ չի կարող, եթե յուրաքանչյուր տարի ներկայիս 25-30-ի փոխարեն չստեղծվեն տասնապատիկ ավելի ընկերություններ: CAPS-ի տնօրենը եւս առաջարկներ ուներ այս ոլորտի հետագա զարգացման ուղղությամբ: Նրա համոզմամբ՝ Հայաստանում գիտելիքների որակի բարձրացման պահանջարկը չի խրախուսվում, եւ մասնավորապես անընդունելի է մասնագետի վերապատրաստման համար կատարված ծախսերի հարկումը, որը հավելյալ խոչընդոտ է բիզնեսի զարգացման ճանապարհին:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՌԵՊԼԻԿ

# Նորից ու նորից մատնոցախաղ

Աչքներս լույս: Ազգային ժողովը հերթական «մատնոցախաղը» մատուցեց: Հապճեպ մի նոր օրենք ընդունեց՝ հերթական անգամ բարձրացնելով բենզինի եւ ծխախոտի հարկերը: Միամիտ մարդիկ կասեն. «Դո՞ւ ինչու ես անհանգստանում. թող բենզին ներկրողներն ու ծխախոտ արտադրողները դարդ անեն... Թող աչքալուսանք անեն ապրանք ներկրող պատգամավորներն ու նրանց ընկերներն ու բարեկամները», որոնք վաղուց համոզվել են, որ մենք վատ ենք տեսնում եւ, ամենակարեւորը՝ կորցրել ենք հիշողությունը:

Սխալվում եք, պարոնայք: Երբեք հնարավոր չէ մոռանալ 1999 թ. օգոստոսի 1-ի Ազգային ժողովի չարաբաստիկ, բենզինի եւ ծխախոտի հարկերի բարձրացման որոշումը: Այսօրվա նման այն ժամանակ էլ էին որոշ միամիտ մարդիկ կարծում, թե դա հարված է ծխախոտ արտադրողներին եւ բենզին ներկրողներին: Իրականում տուժեցին բացարձակապես բոլորը՝ ժողովուրդը, կառավարությունը, սկզբում նաեւ ծխախոտ արտադրողն ու բենզին ներկրողը: Ծխախոտի գինը կրկնակի բարձրացավ, ինչի հետեւանքով մարդիկ սկսեցին գնել արտասահմանյանը, նույնիսկ խմբերով մեկնում էին Վրաստան՝ ծխախոտ բերելու, ընկավ տեղական ծխախոտի առեւտուրը, վատ վիճակում հայտնվեց նաեւ ծխախոտագործությունը, գյուղացու մեջքը կոտրվեց: Շահեցին միայն ներկրողները: Դրանից մի քանի ամիս անց Հրանտ Վարդանյանը հրապարակավ հայտարարեց, որ միայն մի քանի ամիսներին «Գրանդ Տոբակոն» պետական գանձարանին 25 մլն դրամ պակաս է մուծել: Այո, ինչպես իշխանություններն էին ասում՝ բյուջեն ճեղքվածք տվեց, որովհետեւ բենզինի վաճառքից էլ գումար չէր գալիս: Հիշեցնեմ, որ մինչ այդ բենզինի մեկ տոննայից գանձվող հարկը 105 դոլար էր, ապա այդ ազգակործան որոշումով դարձավ 225 դոլար, իսկ Ազգային ժողովի 2005 թվի մի նոր «մատնոցախաղով» հարկը հասավ 260 դոլարի: Բնականաբար այդ ահռելի հարկը վճարելու համար ներկրողները բարձրացրին գները. 20 լ համար հասցնելով 5000-ից 7000 դրամի (ներկայումս 7600-8000 դրամ է) (ավելի վաղ՝ 90-ականների սկզբներին, հարկը 43 դոլար էր, 20 լ-ի գինը՝ 1200 դրամ): Այդ ամիսներին գրեթե կանգ առավ բենզինի վաճառքը, շատերն իրենց մեքենաները շահագործումից հանեցին, նույնիսկ ամենամեծ ներկրողը՝ «Միկան», մի քանի ամիս դադարեցրեց ներկրումը եւ վաճառքը: Եվ քանի որ բենզինն է ուղղորդում բոլոր ապրանքների գները, ահռելի չափով բարձրացան նաեւ մնացած ապրանքների գները: Ժողովուրդը շնչահեղձ էր լինում:

Գործարար **Մ. Բաղդասարովը** 10 տարի անընդհատ հայտարարում է. «Իջեցրեք բենզինի հարկերը կիսով չափ եւ նույն չափ էլ կնվազեն ոչ միայն բենզինի գները, այլեւ մնացած բոլոր ապրանքների»: Բայց նրան լսող չկա, կարծես բոլորը խլացել են: Ոչ միայն չեն իջեցնում, այլեւ, ինչպես տեսնում ենք, պատրաստվում են առաջիկայում հարկերն էլ ավելի բարձրացնել:

Մինչեւ ե՞րբ:

Վերջում ուզում եմ ավելացնել, որ անպայման գները նորից կբարձրանան: Նորից կսկսվեն դժգոհությունը, անեծքը եւ հայհոյանքը ծխախոտ արտադրողների եւ բենզին ներկրողների հասցեին:

Միամիտ մի եղեք: Վարդանյանները եւ բաղդասարովները գները չեն բարձրացնում: Այդ գործը «մատնոցախաղի» միջոցով ճարտկորեն կատարում են լֆիկներն ու մյուս ներկրողները, եւ ինչքան էլ ցավալի է խոստովանել՝ կառավարությունն ու Ազգային ժողովը:

ԿԱՌԼԵՆ ՔԱԼԱՇՅԱՆ

# Արցախյան հերոսամարտիկների թանգարանը վարձով են տվել՝ կիթառի պարապմունքների համար

1994-ին՝ Արցախյան հերոսամարտի հաղթական ավարտից հետո, Երեւանի Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնում մի խումբ զոհված ազատամարտիկների ծնողների եւ կանանց ջանքերով ստեղծվեց Հայ ազատամարտիկների փառքի թանգարանը, որտեղ հանգրվան գտան հերոսների քանդակները, նկարները, գրքերն ու պահպանված մնացած մասունքները: Թանգարանում յուրահատուկ մթնոլորտ էր ստեղծվել. ամփոփված էին ոչ միայն Արցախյան շարժումը, պատերազմն ու բաղձալի հաղթանակը ցուցադրող պատմությունն ու լուսանկարները, այլեւ ֆիդայական շարժումն ու Հայրենական մեծ պատերազմը:

16 տարում թանգարան շատերն են այցելել՝ հանրապետության նախագահ, վարչապետ, մտավորականներ, նկարիչ ու բանաստեղծ, զինվորական եւ դպրոցական: Նրանց բոլորի այցելությունը խորհրդանշում էր հարգանքի եւ խոնարհումի տուրքի մատուցում հայրենիքի համար զոհված հերոսների համար եւ պարտավորեցնում՝ շարունակելու նրանց ուղին:

Թանգարանի հիմնադիր տնօրեն **Սուսաննա Հակոբյանի** փոխանցմամբ՝ ութ տարի առաջ կենտրոնում սկսվեց վերանորոգումն, ու տնօրեն Լաուրա Ավետիսյանը հրամայեց փակել թանգարանի մեծ սրահը:



*Հայ ազատամարտիկների փառքի թանգարանում նշվեց զոհված ազատամարտիկ, թիվ 165 միջն. դպրոցի սան Կարեն Մանվելյանի ծննդյան 40 տարին: Քանդակի մոտ են մայրը՝ տիկին Ամալյան եւ սիրելի ուսուցչուհի ընկ. Ս. Աչոյանը:*
*21 դեկտեմբեր, 2006 թ.*

Զոհված ազատամարտիկների մասունքները ներկայացնելու համար թանգարանին տրամադրվեց 22 քառ. մետր փոքրիկ սենյակ, որտեղ ցուցանմուշները հազիվ էին տեղավորվում: Մինչ վերանորոգումը կենտրոնի մուտքի վերեւում կար ցուցանակ. «Այստեղ գտնվում է հայ ազատամարտիկների փառքի թանգարանը»: Ծնողները պատմում են, որ անհասկանալի պայմաններում եւ առանց պատճառաբանության ցուցանակը հանվեց:

«**Ազգի**» զրույցում թանգարանի տնօրեն Սուսաննա Հակոբյանն ասաց, որ վերջին շրջանում հարաբերությունները Ավետիսյանի հետ լարված էին: Նա դեմ էր թանգարանի գործունեությանն, ու խոսակցություններ էին ընթանում, որ ցանկանում է թանգարանի տարածքը վարձակալությամբ տրամադրել կիթառի պարապմունքների անցկացման համար: «Հունիսին ասաց, որ սենյակը պետք է տրամադրի ինչ-որ խմբակի, սակայն մեզ իրավունք կտա հին թանգարանի մի մեծ պատի վրա կախել ազատամարտիկների լուսանկարներն ու ցուցադրել նրանց գործերը: Ստիպված համաձայնեցի: Այս թանգարանը առողջությանս գնով եմ պահել, որովհետեւ արդեն մի քանի տարի պատերազմներ են ընթանում: Նա ինձ դուրս շպրտեց իմ հիմնած թանգարանից, սակայն կուլ տվեցի այդ վիրավորանքը: Հեռացա այն հույսով, որ խոստումը կպահի, եւ ազատամարտիկների մասունքները կշարունակեն պահվել թանգարանում: Իսկ դա ամենակարեւորն է», ասաց Սուսաննա Հակոբյանը:

Մի քանի օր անց Հակոբյանը տեղեկանում է, որ սենյակը դատարկել են, իսկ ազատամարտիկների քանդակները, նկարները, գրքերն ու այլ իրեր կենտրոնի տնօրենությունն ուղարկել է Հայրենական մեծ պատերազմի թանգարան: «Երբ գնացի Հայրենական մեծ պատերազմի թանգարան, ասացին, որ ցուցանմուշները պահված են ու մշտական ցուցադրության չեն դրվի: Եթե անհրաժեշտություն առաջանա՝ գուցե ցուցադրվեն: Թանգարանում մերժեցին նաեւ միջոցառումներ անցկացնելու խնդրանքը: Մինչդեռ մենք հաճախ էինք միջոցառումներ, հիշատակի երեկույթներ կազմակերպում»:

Սուսաննա Հակոբյանի փոխանցմամբ՝ թանգարանում 7000 ազատամարտիկի շուրջ 400 մասունք է պահվել: Մի խումբ ազատամարտիկների ծնողներ եւ այրիներ բաց նամակ են ուղարկել նախագահ Սերժ Սարգսյանին եւ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին՝ պահանջով իրենց վերադարձնել թանգարանն ու չխանգարել նրա գործունեությանը:

«Փաստորեն զոհված ազատամարտիկների մասունքները ցուցադրող թանգարանը նախընտրեցին վարձով տալ կիթառի պարապմունքների համար: Այդ փոքրիկ սենյակն էլ շատ համարեցին ազատամարտիկների համար: Այն դեպքում, երբ պատերազմի վտանգը կախված է մեր գլխին, երբ հանրապետության նախագահը սահմանը պաշտպանող խիզախ զինվորին մեդալով է պարգեւատրում, երբ հարյուրավոր պատանիներ այսպիսի թանգարաններում ռազմահայրենասիրական դաստիարակություն են ստանում, մի կին փակում է մի փոքրիկ թանգարան: Թանգարանները շատացնելու, տարածքները լայնացնելու փոխարեն, հակառակն է արվում: Թանգարանը հետ տվեք», ասված է նամակում:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ո՞վ եք, ի՞նչ եք ուզում

Օրեր առաջ հոլանդական «Ազատություն» կուսակցության նախագահ **Հերտ Վիլդերսին** եվրոպացի համախոհները հրավիրեցին Բեռլին, որտեղ Վիլդերսը ելույթ ունեցավ: Ելույթը կարելի է անվանել կոչ՝ ամբողջ Եվրոպային, աշխարհին՝ ստեղծել յուրօրինակ Ինտերնացիոնալ, որն իր առջեւ նպատակ կդնի «փրկել եվրոպական քաղաքակրթությունը, ժողովրդավարությունն ու ազատականությունը իսլամից»:

Իսկ, որ Եվրոպան ունի դրա կարիքը՝ ակնհայտ է: Մի քանի օր առաջ, երբ Թուրքիայի իսլամիստ վարչապետ Էրդողանը Գերմանիայում էր, այդ երկրի կուսակցություններից մեկի ղեկավարը հայտարարեց, որ «շատ լավ կլինի, եթե Գերմանիան այլեւ գոնե խտրականություն ցուցաբերի միգրանտ թուրքերին ընդունելիս», նշենք՝ այսօր արդեն թուրքերի թիվը Գերմանիայում անցնում է 2 միլիոնը: Եթե հավելենք նաեւ «նոր արաբական արշավանքը» դեպի բարեկեցիկ եւ ազատ Եվրոպա, ապա հասկանալի է, թե ինչու Վիլդերսն ու նրա համախոհները որոշել են «փրկել Եվրոպան իսլամից»: Հոկտեմբերի 12-ի համարում «**Ազգը**» գրեց, որ Գերմանիայի ինտեգրման գործերի նախարար Մարիա Բրեմերը «կառավարական մակարդակով» միջոցներ կձեռնարկի՝ կասեցնելու Բեռլինի դպրոցներում գերմանացի երեխաների ճնշումը. գերմանացի երեխաները իրենց իսկ երկրում վախենում են դուրս գալ դպրոցի բակ, քանի որ նրանց ճնշում են մահմեդական երեխաները:

Այս ամենի համատեքստում տարօրինակ եւ խիստ եվրոպական է հնչում Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի հայտարարությունը, որով կոչ է անում գերմանացիներին՝ հանդուրժել մահմեդական միգրանտներին: Մերկելը նույնիսկ կարծիք է հայտնել. «Գերմանիայի իսլամականացումն անխուսափելի է թվում»: Այս կապակցությամբ Գերմանիայի Քրիստոնեա-ժողովրդական միության նախագահ **Ռենե Շտանդկեւիչը**, որն էլ հենց հրավիրել էր հոլանդացի Վիլդերսին Բեռլին, «եվրոպական ժողովի» ընթացքում նշել է. «Մեր քաղաքներում մզկիթները կդառնան ավելի շատ: Ընկերներ, մենք չպետք է հաշտվենք անհանդուրժելիի հետ: Որպես քաղաքական գործիչներ՝ մենք պարտավոր ենք պաշտպանել մեր երկիրն ու մեր երեխաներին»:

## Ո՞ւմ հանձնեց էստաֆետը «կոմունիզմի ուրվականը»

Իսլամին: Ինչպես իր ելույթում նկատել է հոլանդացի Վիլդերսը՝ «Այսօր Եվրոպայում քայլում է մեկ այլ՝ ոչ կոմունիզմի ուրվականը. եւ դա իսլամի ուրվականն է: Սա նաեւ քաղաքական վտանգ է, քանի որ իսլամը ոչ միայն կրոն է, ինչպես կարծում են շատերը, այլեւ, առաջին հերթին, քաղաքական գաղափարախոսություն»:

Վիլդերսի ասածն ամենեւին էլ նորություն չէ. բրիտանացի պատմաբան, BBC-ով ցուցադրված՝ «Արեւմուտքի հաղթարշավը» սերիալի հեղինակ **Ջորջ Ռոբերթսն**, օրինակ, կարծում է. «Չնայած մենք խոսում ենք իսլամի մասին՝ որպես կրոնի, սակայն մուսուլմանները նախ եւ առաջ հստակ մեխանիզմի մասնիկ են, որը չի ընդունում իր համար որեւիցե այլընտրանք»: Իր հերթին ֆլամանդացի (բելգիացի) պրոֆեսոր Ուրբեն Ֆերմյուլենը, որը ժամանակին եղել է «Արաբների եվրոպական համայնք»-ի նախագահ, նշել է. «Իսլամն առաջին հերթին իրավաբանական մեխանիզմ է, օրենք, հետո նոր միայն՝ կրոն»: Հետաքրքրական է նաեւ ամերիկացի պատմաբան Մաքս Ալեքսանդրի կարծիքը. «Մեծ սխալ է իսլամը համարել աշխարհի կրոններից մեկը, քանի որ իսլամը քաղաքականություն է եւ առանց դրա ոչինչ է: Միեւնույն ժամանակ, արդեն իսկ պարզ է, որ իսլամը քաղաքականություն է, որի նպատակն է ոչնչացնել Արեւմուտքը»:

Իսլամի նպատակը ավելի արդարացիորեն հասկանալու համար թերեւս մեջբերենք մահմեդական՝ պակիստանցի մտավորական **Աբդուլ Ալի Մաուդուդի** խոսքերը. «Իսլամը հեղափոխական գաղափարախոսություն է, ջիհադն ինքն արդեն հեղափոխական գաղափարախոսություն է, որի առաքելությունն է ոչնչացնել այն պետությունները, որոնք կընդդիմանան իրեն»:

## Ի՞նչ եք ուզում

Այս հարցին լավագույնս «պատասխանում» է Մուհամմեդ մարգարեն. «Մեր ժողովրդի հնազանդությունը, մեր ժողովուրդների միասնությունը, իսկ հետո նաեւ՝ ամբողջ աշխարհի նվաճումը», ահա Մուհամմեդի խոսքերը, երբ նա խոսում էր իսլամի նպատակներից, որոնք եւս մեկ անգամ ապացուցում են՝ իսլամը վերջին հերթին է կրոն: Ըստ որում՝ Ղուրանի 8:39 սուրահը քարոզում է. «Ես կպայքարեմ բոլոր մարդկանց դեմ, մինչեւ նրանք չասեն՝ չկա այլ աստված, բացի ալլահից: Պայքարեք, քանի դեռ չեն անհետացել անհավատները, քանի դեռ բոլորը չեն ենթարկվում ալլահին»:

Ամերիկացի պատմաբան **Մաքս Ալեքսանդրը** յուրովի է ներկայացնում իսլամի նպատակները: Ըստ պատմաբանի՝ «Իսլամը ոչնչով չի տարբերվում կոմունիզմից եւ ֆաշիզմից, իսլամը հանդուրժում է միայն մի կուսակցություն. այնտեղ, որտեղ իսլամն է, կուսակցությունն էլ պետք է լինի իսլամական, իսլամը պարտադրում է մարդկանց՝ հետեւել բացառապես իրեն, իսլամը ջնջում է տարբերությունները անձնականի եւ հասարակականի միջեւ, իսլամը կանոնավորում է, համակարգում է կրթությունը, արվեստը, գրականությունը, իսլամը մարդու հոգեվիճակը դարձնում է ֆանատիկ, իսլամը արհամարում է ցածր խավը ներկայացնող մարդկանց, եւ վերջապես իսլամը քաղաքականությունը դիտարկում է բացառապես որպես իշխանության միջոց»:

## Ո՞վ եք

Այս ամենով հանդերձ, պետք է ընդունել՝ իսլամն ու մահմեդականը երբեմն տարբեր բաներ են: Շատ մահմեդականներ, օրինակ, Եվրոպայում կամ այլ ոչ մահմեդական երկրներում ամենեւին էլ չեն հետեւում շարիաթի օրենքներին, առավել եւս ջիհադին, սակայն, մյուս կողմից, փաստ է՝ նրանք, ովքեր դա անում են՝ անկախ բնակության վայրից, անում են «խիստ խանդավառությամբ»: Անշուշտ, յուրաքանչյուր միգրանտի իրավունքն է՝ պահպանել իր ազգային ավանդույթներն ու կրոնը, սակայն ոչ ոք ոչ մի դեպքում թույլ չի տա ոչնչացնել իրեն, քանի որ «այդպես է ասել մարգարեն կամ այդպես է գրված Ղուրանում», այս հանգամանքը «քրիստոնեական ակումբ» Եվրոպան արդեն սկսում է հասկանալ:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

# Իրանն ու Ադրբեջանը ամենեւին էլ դաշնակիցներ չեն

«Իրանի եւ Ադրբեջանի միջեւ անվտանգության ոլորտում համագործակցությունն իրականացվում է նախկինում կնքված պայմանագրերի հիման վրա, եւ ներկայումս երկու երկրների միջեւ նոր ոլորտներում հարաբերությունների ընդլայնման միտում օրակարգում նախատեսված չէ»: Այս մասին տեղեկացնում է Panorama.am-ը՝ հղում անելով «Ազատություն» ռադիոկայանի իրանական ծառայությանը, որի հետ զրուցել է Ադրբեջանի պետական պաշտոնյաներից մեկը՝ ամփոփելով Իրանի պաշտպանության նախարարի այցը Ադրբեջան: Հիշեցնենք՝ գեներալ Վահիդիի Բաքու կատարած այցի մասին «**Ազգը**» տեղեկացրել էր հոկտեմբերի 12-ի համարում: «Իրանին անհանգստացնում են ԱՄՆ-ի եւ Իսրայելի հետ Ադրբեջանի ունեցած ռազմական համագործակցության փաստը, Կասպից ծովի ռազմականացումը եւ այն, որ պաշտոնական Բաքուն ողջունում է, որ Գաբալայի ռադարային կայանը, որն ամբողջությամբ հսկում է Իրանի ողջ տարածքը, այդ թվում՝ Օմանի ծովն ու Պարսից ծոցը, համատեղ շահագործվելու է ԱՄՆ եւ Ռուսաստանի կողմից», իր հերթին նշել է Ադրբեջանի «Ռազմական հետազոտությունների վերլուծական կենտրոն»-ի տնօրեն **Ուզեիր Ջաֆարովը**: Իրանական լրատվամիջոցը նշել է նաեւ, որ Ադրբեջանի կողմից Իրանին անհանգստացնող հանգամանքներից մեկն այն է, որ վերջերս Բաքվում բացվեց իսրայելական անօդաչու ինքնաթիռների արտադրության ներկայացուցչությունը, եւ այն երկու ռադարային կայանները, որոնցից մեկը՝ «Աստարան», գտնվում է Իրանի, իսկ մյուսը՝ «Խիզին», Ռուսաստանի սահմանում, գործում են Ադրբեջանի եւ ԱՄՆ-ի համագործակցության շրջանակներում եւ ղեկավարվում՝ Բաքվում գտնվող կենտրոնից: Անդրադառնալով Ադրբեջանի ռազմական դոկտրինի 21-րդ կետին՝ որն օտարերկրյա ռազմական ներկայություն է նախատեսում Ադրբեջանի տարածքում, «Ազատություն» ռադիոկայանի իրանական բաժինը գրում է. «Հաշվի առնելով Ադրբեջանի ռազմական բյուջեի մեծացումը եւ այն փաստը, որ գերտերությունները չեն ցանկանում խախտել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ուժային հավասարակշռությունը, Բաքվի ռազմական դոկտրինի վերնշյալ կետը վերաբերում է Իրանին»:

Հ. Ա.

# Չին կոմունիստները պահանջում են խոսքի եւ մամուլի ազատություն

Չինաստանի Կոմկուսի վետերանները կուսակցության առաջին նախագահ Մաո Ցզեդունի նախկին քարտուղար Լի Ռյուի գլխավորությամբ բաց նամակ են գրել երկրի կառավարությանը: Նամակում նրանք իրենց անհամաձայնությունն են հայտնում իշխանությունների քարոզչական քաղաքականությանը, գրում է բրիտանական «Գարդիան» թերթը:

Կոմունիստների ելույթի առիթը ամերիկյան CNN հեռուստաալիքին ՉԺՀ վարչապետ Վեն Ցզյաբաոյի տված հարցազրույցն է, որից գրաքննիչները հանել էին քաղաքական բարեփոխումների հնարավորության վերաբերյալ վարչապետի ասած խոսքերը: Նամակի հեղինակները կառավարությանը կոչ են անում մեղմացնել ԶԼՄ-ների գրաքննությունը եւ Չինաստանում թույլատրել խոսքի եւ մամուլի ազատություն, որը նախատեսված է սահմանադրության 35-րդ հոդվածում:



«Նույնիսկ մեր կառավարության ղեկավարը հնարավորություն չունի ազատ արտահայտվելու», զարմանք են հայտնում կոմունիստները:

Փաստաթուղթը ստորագրել են 500 անձինք՝ լրագրողներ, խոշոր գիտնականներ եւ Կոմկուսի նշանավոր գործիչներ: Նամակը պաշտոնապես ներկայացվել է հոկտեմբերի 15-ին, սակայն ուղերձի պատճենները ինտերնետի միջոցով ավելի վաղ տարածվել էին ամբողջ Չինաստանում: Ինչպես հայտարարել է «Ժենմին ժիբաո» թերթի նախկին գլխավոր խմբագիր Հու Ցզիվեյը, իշխանությունները կարող են ջնջել պատճենները, բայց ճշմարտությունն անհնար է ոչնչացնել:

Բրիտանական թերթի տվյալներով՝ նամակի տեքստը հոկտեմբերի 13-ին հայտնվել էր մի քանի կայքերում, բայց գրաքննիչներն անմիջապես ջնջել էին այն: Չինաստանի նախկին գլխավոր ճարտարապետ Սյաո Մոն Կոմկուսի քարոզչության ներկայիս բաժնի աշխատակիցներին անվանել է «բութ պահպանողականներ» եւ հույս է հայտնել, որ ապագայում գաղափարախոսները ստիպված կլինեն պատասխան տալ շատ հարցերի:

Ավելի վաղ ամերիկյան Google որոնողական համակարգը քիչ էր մնում հեռանար չինական շուկայից, քանի որ պաշտոնական Պեկինը ամերիկացիներից պահանջել էր թույլատրել հատուկ ծառայությունների մուտքը Google-ի զտիչ համակարգ:

# «Հերոինի արքա» Մեդինան արտաքսվեց ԱՄՆ

Մեքսիկայի կառավարությունը ԱՄՆ է արտաքսել մի հանցագործի, որը դեպի Միացյալ Նահանգներ թմրադեղերի թերեւս ամենաազդեցիկ մատակարարն է եղել: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը, Մեքսիկայի գլխավոր դատախազությանը վկայակոչելով, հաղորդում է, որ խոսքը Խոսե Անտոնիո Մեդինայի մասին է, որ հայտնի է նաեւ «Դոն Պեպե» եւ «Հերոինի արքա» մականուններով: Մեդինան դատվելու է Կալիֆոռնիայում:

Հաղորդվում է, որ նա մեղադրվում է Կալիֆոռնիայի նահանգում 2007-2008 թթ. թմրադեղերի առեւտրով զբաղված լինելու մեջ:

«Դոն Պեպեն» Մեքսիկայում ձերբակալվել է 2010-ի մարտին: Քննության տվյալներով՝ նա աշխատել է La Familia կարտելի համար: 36-ամյա Մեդինայի ղեկավարությամբ ամեն ամիս ԱՄՆ տարածք է անցկացվել մոտ 200 կգ հերոին: Թմրանյութերի վաճառքի ամսական եկամուտը կազմել է 12 մլն դոլար:

# Հրեաները Արեւելյան Երուսաղեմում հարյուրավոր տներ կկառուցեն

*«Նաթանյահուն խփում է բանակցությունների դագաղի վերջին մեխը»*



Իսրայելի բնակարանային շինարարության նախարարությունը մրցույթ է հայտարարել մոտ 4000 բնակարանի շինարարության համար, այդ թվում՝ հարյուրավոր բնակարաններ Երուսաղեմի Ռամոտ եւ Պիսգատ-Զեեւ շրջաններում: Պաղեստինյան ինքնավարությունը դրանք համարում է վիճելի տարածքներ:

Նախարարության տվյալներով՝ Ռամոտում լրացուցիչ կառուցվելու է 158 բնակարան, Պիսգատ-Զեեւում՝ 80:

Մրցույթի շրջանակներում ընդամենը կկառուցվի 450 միավոր բնակարան: Խոշոր շինարարություն է նախատեսված նաեւ Աշդոդում եւ Նաթանիայում: Ընդհանուր առմամբ շինարարություն կծավալվի Իսրայելի 17 բնակավայրում:

«Քոլ Իսրայել» ռադիոկայանը նշում է, որ տները կառուցվելու են բնակարանային շինարարության նախարարության որոշման հիման վրա: Սակայն Արեւելյան Երուսաղեմում շինարարություն ծավալելու որոշումը հաստատվել է վարչապետի գրասենյակում, ըստ որում վարչապետ Բենիամին Նաթանյահուն չի էլ փորձում տվյալ որոշումը թաքցնել Պաղեստինյան ինքնավարությունից:

Քաղաքագետներից շատերը կարծում են, որ Նաթանյահուն այդ քայլին դիմում է կառավարող կոալիցիան պահպանելու նպատակով: Պաղեստինյան կողմն արդեն հայտարարել է, որ վիճելի տարածքներում նոր բնակարանների կառուցմանը հավանություն տալով՝ Նաթանյահուն «խփում է բանակցությունների դագաղի վերջին մեխը»: Խոսքը պաղեստինա-իսրայելական հաշտության բանակցությունների մասին է, որոնց շարունակումը պաղեստինցիներն անհնար են համարում Այսրհորդանանում հրեական ավանների կառուցման մորատորիումի ժամկետի (2012-ի սեպտեմբեր) ավարտից հետո:

Նաթանյահուին վերաբերող հիշյալ արտահայտության հեղինակը պաղեստինյան «Ֆաթհ» շարժման Երուսաղեմի գործերի նախարար Հաթըմ Աբդ ալ Քադրն է: Նա հրապարակավ հայտարարել է, որ եթե ինքը ստիպված լինի ընտրություն կատարել Իսրայելի եւ արմատական «Համաս» շարժման միջեւ, ապա կընտրի «Համասը»:

# Ռոք աստղերի աջակցությունը Գյումրիին

«Ռոքն օգնում է Հայաստանին» ծրագրի շրջանակներում տեղի ունեցող իրադարձություններին երեկ անդրադարձան «Մեդիամաքս» գործակալության տնօրեն **Արա Թադեւոսյանն** ու Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպան **Չարլզ Լոնսդեյլը:**

Ներկայումս Deep Purple եւ Black Sabbath խմբերի երկրպագուները մեծ հետաքրքրությամբ սպասում են Out of my mind երգի թողարկմանը: Այս երգը **Յան Գիլանի** (Deep Purple) եւ **Թոնի Այոմիի** (Black Sabbath) համագործակցության արդյունքն է լինելու: Երգի հանդեպ երկրպագուների հետաքրքրությունը մեծ է հատկապես այն պատճառով, որ Յան Գիլանը Black Sabbath-ի անդամ է եղել: Ռոք աստղերի երկրպագուները ոգեւորությամբ սպասում են, թե ինչպիսին կլինի Գիլանի եւ Թոնի Այոմիի համագործակցության նոր փորձը: Հայաստանում եւս սպասում են Out of my mind երգի թողարկմանը ու ավելի մեծ ակնկալիքներով, քան այլ երկրներում. Out of my mind երգի վաճառքից գոյացած ողջ հասույթն ուղղվելու է Գյումրիի թիվ 6 երաժշտական դպրոցի վերակառուցմանը: Ակնկալվում է, որ երգը կթողարկվի մինչեւ տարեվերջ:




«Ռոքն օգնում է Հայաստանին» նախագծի պատմությունը սկսվել է դեռեւս 1989 թվականից, երբ երկրաշարժից տուժած Հայաստանին օգնելու նպատակով Ջոն Դիի նախաձեռնությամբ ռոքի աստղերը ձայնագրեցին Smoke on the water երգը: 20 տարի անց՝ 2009 թվականին Ջոն Դին պատրաստեց Smoke on the water-ի ռեմիքս տարբերակը, սակայն ռեմիքսի թողարկումը փոքր-ինչ հետաձգվեց: Արա Թադեւոսյանը տեղեկացրեց, որ երեկ գերմանական Edel ընկերությունը թողարկել է Smoke on the water-ի ռեմիքս տարբերակը: Ռեմիքսի վաճառքից գոյացած ողջ հասույթը նույնպես ուղղվելու է Գյումրիի թիվ 6 երաժշտական դպրոցի վերակառուցմանը: Երեկվանից Smoke on the water-ի ռեմիքսը վաճառվում է Գերմանիայում, իսկ հաջորդ շաբաթվանից հասանելի կլինի բոլոր երկրների բնակիչների համար: Հոկտեմբերի 26-ից էլ հնարավոր կլինի ռեմիքսը բեռնել iTunes օն-լայն խանութից:

Խոսելով «Ռոքն օգնում է Հայաստանին» ծրագրի մասին՝ Չարլզ Լոնսդեյլը նշեց. «Սա Հայաստանի եւ Մեծ Բրիտանիայի միջեւ գոյություն ունեցող հրաշալի երաժշտական կապ է»: Չարլզ Լոնսդեյլը կարեւորեց, որ այս համագործակցությունը շարունակական լինի. «Մենք ուզում ենք, որ հայ երաժիշտները եւս համագործակցեն այս ծրագրի շրջանակներում»:

Անդրադառնալով ծրագրին հայ երաժիշտների մասնակցության հարցին՝ Արա Թադեւոսյանն ասաց, որ հայ երաժիշտների մասնակցությունը սիմվոլիկ բնույթ կունենա: Հայաստանում համերգ տալով դժվար թե հնարավոր լինի գումար հավաքել դպրոցի շինարարության համար:

Գյումրիի երաժշտական դպրոցի շինարարության համար, ըստ Արա Թադեւոսյանի, 250 հազար դոլար է հարկավոր, որի գրեթե 1/3 մասը՝ 75 հազար դոլարը, արդեն հավաքվել է: Երաժշտական դպրոցի վերակառուցման ծրագիրը ներկայացվել է նաեւ Queen խմբի հիմնադիր-անդամ Բրայան Մեյին: Չի բացառվում, որ ծրագրի իրականացման գործում Բրայան Մեյը եւս մասնակցություն կունենա:

Ասուլիսի վերջում բանախոսները ասացին, որ Բրայան Մեյը պարգեւատրվել է «Պատվո շքանշանով»: Հոկտեմբերի 7-ին Լոնդոնում Հայաստանի դեսպանությունում ՀՀ գործերի ժամանակավոր հավատարմատար Գագիկ Կիրակոսյանը Բրայան Մեյին հանձնել է 2009 թվականին ՀՀ նախագահի հրամանագրով շնորհված «Պատվո շքանշանը»:

**Ի. Պ.**

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ

# Երկխոսություն երրորդի համար

Հ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնում երեկ նշվեցին Հենրիկ Մալյանի 85 եւ Հ. Մալյանի անվան կինոդերասանի թատրոնի 30-ամյակները, «Երկխոսություններ երրորդի համար» Հ. Մալյանի ինքնակենսագրական վերահրատարակված գրքի շնորհանդեսը, նաեւ Հ. Մալյանի եւ թատրոնի պաշտոնական կայքերի շնորհանդեսը: Կազմակերպիչներն էին ՀՀ մշակույթի նախարարությունը, Հայաստանի ազգային կինոկենտրոնը, «Հենրիկ Մալյան» մշակութային հիմնադրամը եւ «Դիքսի» ստեղծագործական թիմը:

Միջոցառումը անցավ պարզ եւ անկաշկանդ մթնոլորտում: Թատրոնի գեղարվեստական ղեկավար **Նարինե Մալյանը** նշեց. «Հ. Մալյանին դուր չէր գա, որ իր 85-ամյակը վերածվեր մեծարման երեկոյի, դրանից նա կկաշկանդվեր»:

Ներկաների թվում էին Սոս Սարգսյանը, Տիգրան Մանսուրյանը, Ալբերտ Մկրտչյանը, Պարույր Հայրիկյանը, Վարդան Պետրոսյանը, Ռուբեն Գեւորգյանցը, Շուշան Պետրոսյանը, կինոյի եւ թատրոնի անվանի ներկայացուցիչներ, արվեստագետներ: Երեկոյի ընթացքում, ինչպես հուշերի շղթա, ներկայացվեց Հ. Մալյանի բեմադրած Հ. Թումանյանի «Հեքիաթները»: «Սակայն սա չի կարելի համարել Հ. Մալյանի անվան թատրոնի 30-ամյակին նվիրված երեկո, այն մենք կնշենք մեր թատրոնում, թեկուզ ուշացումով», ասաց թատրոնի գեղարվեստական ղեկավար Ն. Մալյանը:

Թատրոնի մասին զրուցեցինք Նարինե Մալյանի հետ:

**- Ըստ Ձեզ՝ մալյանական ոգին այսօր պահպանվո՞ւմ է ներկայացումներում:**

- Չեմ կարող ասել, որ լիարժեք պահպանվում է: Փորձում ենք պահպանել այն, ինչ ստացել ենք Հ. Մալյանից, պահել այնպես, ինչպես սովորեցրել է Հ. Մալյանը և՛ որպես քաղաքացի, և՛ որպես արվեստագետ:

**- Իր ստեղծագործություններում Հ. Մալյանը ըմբոստանում էր ազգայնապաշտական եւ հասարակական անարդարության դեմ: Ըստ Ձեզ՝ որպես Հ. Մալյանի դստեր եւ թատրոնի գեղարվեստական ղեկավարի, եթե Հ. Մալյանը ողջ լիներ, այսօր ինչի՞ դեմ կըմբոստանար:**

- Հ. Մալյանը կըմբոստանար անտարբերության եւ ապազգային յուրաքանչյուր արտահայտության դեմ: Նա ցավով էր ընդունում այդ ամենը եւ անում էր ամեն ինչ, որ այդ թերությունը վերանա:

**- Ի՞նչ եք կարծում, կան այսօր Հ. Մալյանի ավանդույթները շարունակողներ, բացի Մալյանի թատրոնից:**

- Ես շատ կցանկանայի, որ լինեին այդպիսիք, ցավոք արդի իր տեսակի մարդիկ այսօր քիչ են, եւ բոլորս ունենք նման մարդկանց կարիք:




**- Տարբեր տոներում եւ սերիալներում Ձեր թատրոնի դերասանների մասնակցությունը արդյոք չի՞ խանգարում թատրոնի ստեղծագործական ձեռագրին: Ինչպե՞ս եք դուք վերաբերվում դրան:**

- Երբ զգում եմ, որ «տիզը» մտնում է թատրոն՝ դերասանի խոսքի մեջ, պլաստիկայի մեջ, փոքր զրույցի միջոցով ուղղումներ եմ կատարում, եւ ամեն ինչ վերականգնվում է: Սերիալին նայում եմ որպես վարժանքի դերասանի համար:

Կարծում եմ, որ Հ. Մալյանի թատրոնի դերասանները ստեղծագործական բերկրանք ապրում են միայն թատրոնում:

**ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

# Սիլվա Տեր-Ստեփանյանի պատկերազարդ նոր բառարանը

Նյու Ջերսիում վերջերս լույս է տեսել «Արա Մարալին հայերէն այբուբենի պատկերազարդ բառարանը» (140 էջ): Այն պատրաստել է Նյու Յորքից մանկավարժ-մեթոդիստ **Սիլվա Լ. Տեր-Ստեփանյանը**: Խմբագիր՝ Նուպար Քյուրդեյան:




Սփյուռքահայ դպրոցին, կրթական կյանքին Սիլվա Տեր-Ստեփանյանի նվիրումը տարեցտարի ավելի արժեքավոր ու գնահատելի գործունեության է վերածվում: Եվրոպական մասնագիտական բարձրագույն կրթությունը, մանկավարժության ոլորտում աշխատանքային բազմամյա փորձն ու հմտությունը եւ հատկապես տարբեր տարիքի երեխաների հոգեբանության խոր ճանաչողությունը եւ ամենակարեւորը՝ հայ լեզվի, գրի, մշակույթի, առհասարակ հայության հանդեպ առանձնահատուկ սերն է, որ մղում է նրան այսպիսի բեղուն, արդյունավետ գործունեության: Նրա հեղինակությամբ լույս տեսած բազմաքանակ ու բազմաբնույթ դասագրքերի, մանկավարժական ուղեցույցների, մեթոդական ձեռնարկների պատկառելի ցանկը, որը ներկայացնելու առիթ կունենանք, ինքնին առանց մեկնաբանությունների խոսում է հայապահպանության խնդիրը կյանքի գլխավոր նպատակ դարձրած հեղինակի հայադրոշմ նկարագրի մասին:

Վերոնշյալ բառարանը՝ 1951 միավոր բառերի ընդգրկմամբ, կազմված է հայոց այբուբենին եւ բառապաշարի որոշակի խմբաքանակին երեխային ծանոթացնելու նպատակով՝ հասցեագրված հայության անգլիախոս հատվածին: Ընդգրկված բառերի մի զգալի մաս գործածված է հեղինակի «Արա-Մարալ» դասագրքերի շարքում: Բառարանում կարելի է հանդիպել նորաստեղծ, նորահայտ բառեր, որ հեղինակը փորձում է շրջանառության մեջ դնել: Ինչպես օրինակ՝ բանառաք բառը՝ փոխարինող էլ. հասցեին (e-mail):

Նմանատիպ բառարաններից սույնը ունի տարբերակիչ առանձնահատկություններ: Կազմված բառարանագրության ընդունված կանոններով՝ այն միաժամանակ պատկերային է՝ յուրաքանչյուր բառ ներկայացված է համապատասխան գունավոր պատկերով: Հայերեն յուրաքանչյուր բառին համարժեք տրված է նաեւ անգլերենը, որով այն երկլեզվյա նշանակություն է ստանում եւ ամենակարեւորը՝ անգլիագիր հայերեն բառի վանկատումը նորություն է: Անգլերեն հնչողությամբ տառադարձությունը կատարված է նախապես տրված յուրաքանչյուր հայերեն գրին համապատասխան անգլերեն հնչյունային՝ հեղինակի որդեգրած համակարգով: Այսպես՝ Ա ա - a - as in c**a**r, Ո ո - vo - as in bra**vo** at the beginning of a word, կամ Ո ո - o - as in **o**r in the middle of a word, Ձ ձ - ts - as in i**ts** եւ այլն, նաեւ տրված են հայերեն երկբարբառներն ու առանձին հնչյունախմբեր անգլերեն հնչողությամբ, օրինակ՝ Ույ - ooy before consonants, ութիւն - oot-yoon եւ այլն:

Այբուբենի սկզբնատառով սկսվող բառերը թվաքանակով ամենաշատն են՝ 147 բառ-միավոր, որոնք տվյալ տառի ներքո ներկայացված են հայերենով, վանկատված անգլերեն տառադարձմամբ եւ ապա անգլերեն գրությամբ: Օրինակ՝ Ալիւր - A - lyoor - Flour, Աղքատ - Agh - kad - Poor, Անուն - A - noon - Name, Ամպհովանի - Amb - ho - va - nee - Canopy, Ասեղ - A - sehgh - Needle եւ այսպես՝ շարունակաբար:

Բառարանի մյուս առանձնահատկությունը զուտ հայկական հասկացություններ արտահայտող բառ-միավորների գործածությունն է, որն անշուշտ, հայ երեխային ամենափոքր տարիքից իր ինքնության բուն տարրի՝ լեզվի միջոցով հայկականությանը հաղորդ պահելու նպատակին է հետամուտ: Դրանք, իհարկե, ազգային սովորություններին, եկեղեցական-կրոնական կյանքին վերաբերող (Սբ Մյուռոն, քահանա, մասունք, մատուռ եւ այլն), պատմական անցյալի հերոսների, մշակութային հայտնի գործիչների, վայրերի անուններ են (Սուրբ Տրդատ, Սուրբ Մեսրոպ Մաշտոց, Սուրբ Վարդան,




Սուրբ Էջմիածին եւ այլն), իսկ եթե դրոշ, դրամ եւ այլն, ուրեմն՝ պատկերում հայկականն է:

Բավական աշխատատար եւ ժամանակ պահանջող այս բառարանը կազմելիս՝ Սիլվա Տեր-Ստեփանյանի խնդիրը նախադպրոցական տարիքի երեխային հայերեն բառապաշարին ծանոթացնելն է եղել, որի մի մասը, եթե հայախոս միջավայրում է, արդեն ծանոթ է առօրյայում, սակայն համակարգված, այբբենական կարգով, պատկերի եւ գրի միջոցով, իհարկե՝ ոչ: Փոքրիկն այս բառարանից լիարժեք օգտվել կարող է ծնողների օգնությամբ միայն, որոնց, եթե անգլիախոս են, գործը դյուրացնելու համար հեղինակը կիրառել է շատ մատչելի մեթոդ (անգլերեն տառադարձություն):

Սույն արժեքավոր բառարանը նախադպրոցական տարիքի սփյուռքահայ երեխայի համար ունի ճանաչողական նշանակություն: Գունավոր պատկերներն ավելի տպավորիչ-առարկայական են դարձնում երեւույթի, հասկացության ընկալումն ու մտապահումը, իսկ բազմաթիվ նոր բառերի, հերոսների, տեղանունների հետ ծանոթացումը, որոնց ավելի ուշ նա հանդիպելու է դպրոցական դասագրքերում, կդյուրացնի ուսման հետագա ընթացքը: Ինչպես Սիլվա Տեր-Ստեփանյանն է ասում. «Փոքրիկի ճանաչողական միտքը կզարգացնե, դպրոցի ճամփան կբացե»:

**ՍԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ**

# «Միկայի» շախմատիստները կվիճարկեն Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը



Հոկտեմբերի 17-ին Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում կմեկնարկեն շախմատի Եվրոպայի կանանց եւ տղամարդկանց ակումբային առաջնությունները: Հայաստանն այդ մրցումներին կներկայացնեն կանանց եւ տղամարդկանց «Միկա» թիմերը:

Տղամարդկանց մրցաշարի հաղթողը կպարգեւատրվի 10 հազար եվրոյով, 2-րդ տեղը զբաղեցրած թիմը՝ 5 հազարով, 3-րդ տեղը՝ 3750 եվրոյով: 2500 եվրո կստանան 4-րդը եւ 5-րդը ճանաչված թիմերը, իսկ 6-րդ տեղը զբաղեցրած ակումբը կպարգեւատրվի 1250 եվրոյով: Կանանց մրցաշարի 1-4-րդ տեղերը զբաղեցրած ակումբների պարգեւավճարը կկազմի համապատասխանաբար 6000, 3000, 1800 եւ 1200 եվրո:

Տղամարդկանց «Միկա» թիմում ընդգրկված են Լեւոն Արոնյանը (2783), Վլադիմիր Հակոբյանը (2691), Գաբրիել Սարգսյանը (2677), Արման Փաշիկյանը (2639), Տիգրան Պետրոսյանը (2613), Զավեն Անդրեասյանը (2579), Հրանտ Մելքումյանը (2614) եւ Աշոտ Անաստասյանը (2578):

Կանանց «Միկա» թիմում ըստ խաղատախտակների հանդես կգան Էլինա Դանիելյանը (2466), հնդիկ շախմատիստուհի Հարիկա Դրոնավալին (2515), Լիլիթ Մկրտչյանը (2484) եւ Լիլիթ Գալոյանը (2373):

Եվրոպայի ակումբային առաջնությանը մասնակցելու հայտ են ներկայացրել տղամարդկանց 49 եւ կանանց 16 թիմեր: Տղամարդկանց մրցաշարում ամենաբարձր վարկանիշն ունի ադրբեջանական «Սոկարը» (2737): 2700-ից բարձր վարկանիշ ունեն նաեւ Մոսկվայի շախմատի տան թիմը (2713), Սանկտ Պետերբուրգի «Chess Club»-ը (2711) եւ «Էկոնոմիստը» (2702): Երեւանի «Միկան» 2670 վարկանիշով 7-րդ տեղում է:

Կանանց մրցաշարում ամենաբարձր վարկանիշը (2511) ունի AVS-ը: Այնուհետեւ գալիս են Սանկտ Պետերբուրգի «Chess Club»-ը (2474), Թբիլիսիի «Սամաիան» (2464) եւ «Միկան» (2460):

Ի տարբերություն հավաքականների, Եվրոպայի ակումբային առաջնությունում թիմերի կազմերում թույլատրվում է հայտավորել այսպես կոչված լեգեոնական շախմատիստների: Շատ թիմեր օգտվում են այդ իրավունքից: Օրինակ Ադրբեջանի «Սոկարի» կազմում են ռուսաստանցի Ալեքսանդր Գրիշչուկը, Իսպանիան ներկայացնող Ալեքսեյ Շիրովը, ֆրանսիացի Մաքսիմ Լագրավ-Վաշյեն, որոնց վարկանիշը 2700-ից բարձր է, ինչպես նաեւ ուզբեկ Ռուստամ Կասիմջանովը: Հենց այս շախմատիստների շնորհիվ է «Սոկարի» վարկանիշն ամենաբարձրը: Իսկ ադրբեջանցի շախմատիստներից թիմում ընդգրկված են Շահրիյար Մամեդյարովը (2756), Թեյմուր Ռաջաբովը (2748), Ռաուֆ Մամեդովը (2660) եւ Էլթաջ Սաֆարլին (2607): Ինչ խոսք, նման կազմով «Սոկարը» գլխավոր մրցանակի հավակնորդներից է:

Սլովակիան ներկայացնող Սերգեյ Մովսիսյանը նախընտրել է Սանկտ Պետերբուրգի «Chess Club»--ը, որի առաջին խաղատախտակին հայտավորված է օլիմպիական չեմպիոն, Խանտի Մանսիյսկում հիանալի հանդես եկած Վասիլի Իվանչուկը (2754): Այս թիմում է նաեւ Ուկրաինայի հավաքականի եւս մեկ անդամ՝ Զախար Եֆիմենկոն (2683):

Առաջնության մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշն ունի Լեւոն Արոնյանը (2783): Լավագույն տասնյակում են նաեւ Պավել Էլյանովը (2761), Ալեքսանդր Գրիշչուկը (2760), Շահրիյար Մամեդյարովը (2756), Վասիլի Իվանչուկը (2754), Բորիս Գելֆանդը (2751), Ալեքսեյ Շիրովը (2749), Թեյմուր Ռաջաբովը (2748), Սերգեյ Կարյակինը (2747) եւ Յու Վանը (2732): Վլադիմիր Հակոբյանն (2691) այդ ցանկում 27-րդն է, Գաբրիել Սարգսյանը (2677)՝ 37-րդը:

Կանանց մրցաշարի մասնակիցներից լավագույն արդյունքն ունի բուլղարուհի Անտոանետա Ստեֆանովան (2551), որին հաջորդում է ուկրաինուհի Կատերինա Լահնոն (2539): Երկուսն էլ խաղալու են AVS թիմում: 3-րդ վարկանիշն ունի «Միկայում» ընդգրկված Հարիկա Դրոնավալին (2515): Լիլիթ Մկրտչյանը (2484) 9-րդն է, Էլինա Դանիելյանը (2466)՝ 11-րդը, Լիլիթ Գալոյանը (2373)՝ 25-րդը:

Եվրոպայի տղամարդկանց հերթական առաջնությունը 26-րդն է: Այն անցկացվում է 1976-ից: 1995-ին Լյուբլյանայում կայացած մրցաշարում «Երեւանը» դարձել է չեմպիոն: Այդ տարի թիմի կազմում ըստ խաղատախտակների հանդես են եկել Վլադիմիր Հակոբյանը, Սմբատ Լպուտյանը, Աշոտ Անաստասյանը, Արտաշես Մինասյանը, Նորայր Քալանթարյանը եւ Արսեն Եղիազարյանը: «Երեւանը» 1996-ին գրավել է 12-րդ տեղը, 1997-ին՝ 7-րդը: 2006-ին մրցաշարին մասնակցել է «Բանկերի արքան» (11-րդ տեղ), որը 2008-ին զբաղեցրեց 7-րդ տեղը: Տղամարդկանց «Միկա» թիմը նորամուտը նշել է անցյալ տարի Մակեդոնիայի Օհրիդ քաղաքում անցկացված Եվրոպայի ակումբային առաջնությունում: Թիմը գրավեց 2-րդ տեղը՝ 7 մրցախաղերում վաստակելով 12 միավոր (6 հաղթանակ, 1 պարտություն): Թիմի կազմում հանդես եկան Լեւոն Արոնյանը (4,5 միավոր 7 հնարավորից), Վլադիմիր Հակոբյանը (4), Գաբրիել Սարգսյանը (4,5), Արման Փաշիկյանը (4), Զավեն Անդրեասյանը (2,5) եւ Տիգրան Պետրոսյանը (5):

Կանանց «Միկա» թիմը մրցումներին սկսել է մասնակցել 2005-ից: Այդ տարի մեր թիմը գրավեց 9-րդ տեղը: Իսկ ահա հաջորդ տարի Ֆյուգենում անցկացված առաջնությունում «Միկան» դարձավ չեմպիոն: Հաջողությունում իրենց ներդրումն ունեցան Մայա Չիբուրդանիձեն (5 միավոր 7 հնարավորից), Էլինա Դանիելյանը (3,5), Նինո Խուրցիձեն (6) եւ Նելլի Աղինյանը (3):

2007-ին «Միկան» դարձավ 3-րդ մրցանակակիր: Թիմի կազմը նույնն էր, ավելացել էր պահեստային Լիանա Աղաբեկյանը: 2008-ին «Միկայի» շախմատիստուհիները գրավեցին 5-րդ տեղը: Իսկ ահա անցյալ տարի «Միկան» անհաջող հանդես եկավ՝ գրավելով 9-րդ տեղը: Թիմի կազմում հանդես էին գալիս Էլինա Դանիելյանը, Հարիկա Դրոնավալին, Նինո Խուրցիձեն եւ Լիլիթ Գալոյանը:

Հուսանք, որ այս տարի «Միկայի» երկու թիմերն էլ հաջող հանդես կգան մրցաշարում:

## Մարմնամարզիկը որակազրկվել է կոկաինի օգտագործման համար

Հայտնի մարմնամարզիկ Յուրի վան Գելդերը հեռացվել է Հոլանդիայի հավաքականից, որը մասնակցելու է Ռոտերդամում վաղը մեկնարկելիք աշխարհի առաջնությանը: Հեռացման պատճառը մարզիկի կողմից կոկաինի օգտագործումն է: Ընդ որում սա առաջին դեպքը չէ: 2009-ի հունիսին Գելդերն արդեն մեկ տարով որակազրկվել էր, քանի որ երկրի առաջնության ավարտից հետո անցկացված դոպինգ ստուգմամբ նրա օրգանիզմում կոկաին էր հայտնաբերվել: Այն ժամանակ մարզիկը խոստովանել էր, որ կոկաինն օգտագործել է զվարճանալու համար:

Յուրի վան Գելդերը տիտղոսակիր մարմնամարզիկ է: Նա 2005-ին Դեբրեցենում նվաճել էր Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը, իսկ Մելբուռնում հռչակվել էր աշխարհի չեմպիոն: Աշխարհի առաջնություններում հոլանդացի մարմնամարզիկը դարձել է նաեւ արծաթե եւ բրոնզե մրցանակակիր:

## Բարեգործական աճուրդ Կիեւում

Նոյեմբերի 1-ին Կիեւում անցկացվելիք բարեգործական աճուրդում վաճառքի կհանվի ուկրաինացի բռնցքամարտիկ Վլադիմիր Կլիչկոյի «ստեղծագործությունը»՝ կտավի վրա արտատպված կլինի նրա բռնցքամարտի ձեռնոցների հետքը: «Ես եւս ինչ-որ չափով նկարիչ եմ, քանի որ մրցակիցներիս դեմքերի վրա փոքրիկ պատկերներ եմ թողնում», նշել է Կլիչկոն:

Լեգենդար թենիսիստ Բորիս Բեքերն էլ Կիեւում աճուրդի կհանի իր սեփական ֆիրմայի ռակետը: Նա արդեն իր մակագրությամբ ռակետը հանձնել է Կլիչկո եղբայրների բարեգործական հիմնադրամի տնօրեն Աննա Ստարոստենկոյին:

## 11-ամյա Գյասին դարձավ «Չելսիի» սան

Լոնդոնի «Չելսին» պայմանագիր է կնքել 11-ամյա հարձակվող Մայքլ Գյասիի հետ, որը հանդես է գալիս «Նորթհեմփթոնի» ֆուտբոլի ակադեմիայում: Գործարքը կազմել է 10 հազար դոլար:

ԲՌՆՑՔԱՄԱՐՏ

## Կլիչկո-Բրիգս մենամարտի տոմսերը գրեթե սպառվել են




**Համբուրգում այսօր կայանալիք բռնցքամարտի մենամարտը WBC-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Վիտալի Կլիչկոյի եւ ամերիկացի Շենոն Բրիգսի միջեւ մեծ հետաքրքրություն է առաջացրել: 14 հազար տոմսերը գրեթե սպառվել են: Բուքմեյքերներն այդ մենամարտում բարձր են գնահատում Կլիչկոյի հաղթելու հնարավորությունը:**

**«Շենոն Բրիգսը ոչ միայն երկար լեզու ունի, այլեւ լավ զարգացած մկաններ: Ճիշտ է, նա հիանալի շոումեն է, սակայն չպետք է անտեսել բռնցքամարտիկի նրա հատկանիշները: Ռինգում լուրջ պայքար է ընթանալու: Երբ նկատեմ, որ Շենոնը սխալ է թույլ տվել, անմիջապես կօգտագործեմ դա ու նոկաուտի կենթարկեմ նրան», նշել է Վիտալի Կլիչկոն:**

**Ամերիկացին արդեն մշակել է մենամարտի մարտավարությունը. «1-ին տարբերակը Կլիչկոյին առաջին ռաունդում նոկաուտի ենթարկելն է, 2-րդը՝ 2-րդ ռաունդում, 3-րդը՝ 3-րդ ռաունդում նրան տապալելն է: Իսկ եթե չհաջողվի Կլիչկոյին նոկաուտի ենթարկել, ապա յուրաքանչյուր ռաունդում նրան լավ կծեծեմ: Իմ հաջորդ մրցակիցը կլինի Վլադիմիր Կլիչկոն, որին մարտահրավեր եմ նետում: Նա այլեւս չի կարող խուսափել իմ հետ մենամարտելուց»:**

**Վլադիմիր Կլիչկոն խորհուրդ է տվել Բրիգսին չշտապել, քանի որ Վիտալիի հետ մենամարտից հետո այլեւս իմաստ չի ունենա մեր հանդիպումը:**

## «Լիվերպուլի» վաճառքին այլեւս ոչինչ չի խանգարում

**Անգլիական «Լիվերպուլ» ակումբը շուտով նոր սեփականատեր կունենա: Մեծ Բրիտանիայի Գերագույն դատարանը մերժել է ակումբի սեփականատեր Թոմ Հիկսի եւ Ջորջ Ժիլետի հայցը «Լիվերպուլի» վաճառքն արգելելու մասին եւ թույլատրել է 300 մլն ֆունտ ստեռլինգով վաճառել NESV ընկերությանը: Ճիշտ է, Հիկսն ու Ժիլետը հետագայում դիմել էին Տեխասի դատարան, որի որոշմամբ արգելվել էր «Լիվերպուլի» վաճառքը, սակայն Մեծ Բրիտանիայի Գերագույն դատարանը հակաօրինական էր համարել այդ վճիռը:**

**«Լիվերպուլով» միայն NESV ընկերությունը չէր, որ հետաքրքրվում էր: Ակումբը գնելու ցանկություն էր հայտնել նաեւ սինգապուրցի միլիարդատեր Պիտեր Լիմը, որը 20 մլն ֆունտ ստեռլինգ ավելի էր առաջարկել: Սակայն օրերս նա հրաժարվել է իր առաջարկից:**

**«Ինձ համար պարզ դարձավ, որ ակումբի տնօրենների խորհուրդը պատրաստ է միայն NESV ընկերության առաջարկը դիտարկել: Նրանց այլ առաջարկներ չեն հետաքրքրում: Այդպիսի պայմաններում իմաստ չունի փորձել գնել ակումբը», հայտարարել է Լիմը:**

## Կառլսենն անդրանիկ հաղթանակը տոնեց

**Բիլբաոյի շախմատի մրցաշարի 5-րդ տուրում վերջապես հաղթանակի քաղցրությունը ճաշակեց նորվեգացի Մագնուս Կառլսենը՝ սպիտակներով պարտության մատնելով Ալեքսեյ Շիրովին: Կրամնիկ-Անանդ պարտիայում մրցակիցները հաշտություն կնքեցին:**

**Մրցաշարի ավարտից մեկ տուր առաջ առաջատարի դերը 9 միավորով պահպանում է Վլադիմիր Կրամնիկը: Նրան 2 միավոր է զիջում Անանդը: Կառլսենն ունի 5 միավոր, Շիրովը՝ 3: Ավարտական տուրում Կրամնիկը սեւերով մրցելու է Շիրովի հետ, իսկ Կառլսենը սպիտակներով կխաղա Անանդի հետ:**

## Բեքհեմը հրաժարվում է հրաժեշտի խաղից

**Դեւիդ Բեքհեմը մերժել է Անգլիայի հավաքականի կազմում հրաժեշտի խաղ անցկացնելու Ֆաբիո Կապելոյի առաջարկը: Վերջինս առաջարկել էր այդ արարողությունը կազմակերպել նոյեմբերին Ֆրանսիայի հավաքականի հետ կայանալիք ընկերական հանդիպման ժամանակ: Մինչդեռ Բեքհեմը գտնում է, որ դեռեւս կարող է օգուտ տալ հավաքականին:**




**Դեռեւս օգոստոսին Հունգարիայի հավաքականի հետ ընկերական մրցախաղից առաջ էր Կապելոն հայտարարել, որ մտադիր չէ այլեւս հավաքական հրավիրել 35-ամյա Բեքհեմին, որը հանդես է գալիս «Լոս Անջելես Գելեքսիում»:**

## «Ռեալը» հետաքրքրվում է Նիլմարով

**Մադրիդի «Ռեալը» հետաքրքրվում է «Վիլյառեալի» հարձակվող Նիլմարով, որը ներկայումս 5 գնդակով գլխավորում է Իսպանիայի առաջնության լավագույն ռմբարկուների ցանկը: Բացառված չէ, որ արքայական ակումբը Բրազիլիայի հավաքականի խաղացողին թիմ հրավիրի արդեն այս ձմռանը:**

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# «Թշնամի» Ադրբեջանը՝ «բարեկամ» Վրաստանում

Աշխարհն աշխարհով, սակայն քարոզչական պատերազմի պայմաններում կողմերը նախընտրում են առաջ տանել այն, ինչ արդեն մի անգամ հայտարարել, եւ բնավ էլ հոգ չէ, որ տարբեր կողմերից հնչող տեղեկությունները ոչ միայն հակասում են իրար, այլեւ մերժում են միմյանց տեսակետները, ավելին, երբեմն էլ բացարձակապես որեւէ կապ չի կարելի տեսնել դրանցում:

Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովի այցելությունը Վրաստան առիթ է դարձել հերթական անգամ հնչեցնելու, թե Բաքուն սպասում է Երեւանի արձագանքին՝ ղարաբաղյան հակամարտության կարգավորման, որքան էլ տարօրինակ է, «մադրիդյան պլանի» առնչությամբ: Բոլոր տարբերակները սպառվել էին՝ «հին», «նոր», «թարմացված», «կրկնվող», «հիմնարար», հիմա էլ ադրբեջանական արտաքին լրահոսում ներկայացվում է ինչ-որ նոր կատեգորիա՝ «մադրիդյան պլան»:

Ադրբեջանական «Թրենդ» գործակալության տեղեկացմամբ, Վրաստանի ԱԳ նախարար Գրիգոլ Վաշաձեի հետ համատեղ ասուլիսում Մամեդյարովը նշել է, թե խոսքը «այն պլանի մասին է, որ դեռեւս 2007-ին համանախագահող երկրների կողմից ներկայացվել ու համաձայնեցվել է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների միջոցով»: Մամեդյարովը դեռեւս մնացել է նախորդ տարվա դեկտեմբերի իրադարձությունների համատեքստում, կրկին բարձրաձայնելով ադրբեջանական այն վարկածը, թե Հայաստանը դեռեւս չի արձագանքել այդ փաստաթղթին, ինչին Ադրբեջանն իբր արդեն իսկ պատասխան է տվել 2009-ի դեկտեմբերին:

Առնվազն տարօրինակ է, որ ժամանակի ընթացքի հետ Մամեդյարովի տեղեկությունների բազան չի թարմացվել կամ ներկայացվում է որպես այդպիսին, քանի որ դեռեւս հունիսի 17-ին Պետերբուրգյան եռակողմ նախագահական՝ Հայաստան, Ադրբեջան եւ Ռուսաստան, հանդիպումից հետո, որոնց հետագայում հղում արեցին որպես աշխատանքային՝ «Պետերբուրգյան առաջարկներ», հայկական կողմը պատրաստակամություն հայտնեց շարունակելու բանակցությունները այդ հունով: Ընդ որում, հենց այդ հանդիպումից անմիջապես հետո էր, որ Ադրբեջանի նախագահը հապշտապ հեռացավ Պետերբուրգից, ու դրան էլ հետեւեցին շփման գծի խախտումները՝ մարդկային զոհերով:

Ամեն դեպքում, Ադրբեջանը, պարզվում է, նախորդ տարվա դեկտեմբերին իբր պատասխան էր տվել, բայց դա էլ, ըստ Մամեդյարովի, վերջնական չէ: Իսկ վերջնական «իր խոսքը» Ադրբեջանը կասի միայն վերջերս տեղի ունեցած ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների դաշտային գնահատման առաքելության արդյունքներից հետո:

Պակաս հետաքրքրական չէ, որ մեր երկու հարեւան երկրների արտգործնախարարները, թերեւս «ունիսոն», զրուցել են ղարաբաղյան խնդրից, Հարավային Օսիայի եւ Աբխազիայի հարցերից, անդրադարձել Կարս-Ախալքալաք երկաթգծի շինարարությանը: Վերջինի առնչությամբ երկու նախարարները հայտնել են, թե այն կավարտվի 2010-ին:

Վրաստան այցելության շրջանակներում Մամեդյարովը այցելել է նաեւ ադրբեջանաբնակ Քվեմո Քարթլիի նահանգ:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Կապինոսը խոսացել է Օհանյանին

**Երեկ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանն ընդունել է ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ներկայացուցիչներին՝ դեսպան Սերգեյ Կապինոսի գլխավորությամբ: Վերջինս պաշտպանության նախարարին ներկայացրել է մի շարք կառուցողական առաջարկություններ ՀՀ ԶՈՒ բարեփոխումների, ռազմաքաղաքական, զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության եւ ռազմակրթական ոլորտի բարեփոխման ոլորտներում ԵԱՀԿ օժանդակության ծավալների ընդլայնման վերաբերյալ: ՊՆ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության փոխանցմամբ, կողմերն իրենց մտահոգությունները են հայտնել վերջին շրջանում սահմանային լարվածության աճի կապակցությամբ: Սեյրան Օհանյանը մասնավորապես նշել է, որ հակառակ դիպուկահար կրակի դադարեցման վերաբերյալ հայկական կողմի առաջարկություններին եւ միջազգային հանրության հորդորներին՝ Ադրբեջանը շարունակում է անտեսել մարդասիրական հանրաճանաչ նորմերը՝ տարբերաբար նենգ միջոցներով խախտելով հրադադարի ռեժիմը, ուստի ՀՀ պաշտպանության նախարարությունը ստիպված է լինելու զգալիորեն խստացնել ադրբեջանական դիպուկահարների չեզոքացման գործողությունները: Դեսպան Կապինոսը խոսացել է ստեղծված իրավիճակի մասին զեկուցել ԵԱՀԿ ղեկավար մարմիններին:**

**Հանդիպումն անցել է կառուցողական մթնոլորտում: Կողմերը պայմանավորվել են քննարկված խնդիրները կյանքի կոչել պաշտպանական բարեփոխումների տարբեր ոլորտներում իրականացվող ծրագրերի մշակման միջոցով:**

Հ. Ա.

# Միջազգային իրավապաշտպանները դատապարտում են անգամ Ավստրիային

**«Ազատություն» ռադիոկայանի փոխանցմամբ՝ միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները հայտարարություն են տարածել, որտեղ կոչ են անում Ավստրիայի իշխանություններին վերջ տալ երեխաների ձերբակալություններին եւ դադարեցնել լավ ինտեգրված ու ապաստանի հարցում մերժում ստացած ընտանիքների արտաքսումը երկրից: Հայտարարությունը ստորագրել է նաեւ Amnesty International հայտնի իրավապաշտպան կազմակերպությունը: Հայտարարության հեղինակները գտնում են, որ Ավստրիան պետք է ավելի լավ պաշտպանի ոչ ավստրիացի փոքրամասնությունների իրավունքները եւ ավելի մեղմ լինի՝ մարդասիրական հիմքի վրա թույլ տալով երկրում մնալ ապաստան հայցող երիտասարդներին ու նրանց ծնողներին: Նշենք, որ օրեր առաջ Ավստրիայում ձերբակալվել եւ հայրենի Կոսովո են արտաքսվել 8-ամյա երկվորյակները եւ նրանց հայրը: Երկրում մնացել է ընտանիքի մայրը, որը հոգեբուժական օգնություն է ստանում: Ընտանիքը Ավստրիայում էր 2004 թվականից: Բացի այդ, նշվում է նաեւ 14-ամյա հայ աղջկա մասին, որ անհետացել է չորեքշաբթի օրը՝ մինչ ոստիկանությունը նրան դպրոցից կվերցներ եւ կվտարեր երկրից: Աղջկա մայրը հսկողության տակ է՝ նրա ինքնասպանության իրական վտանգի պատճառով:**

Հ. Ա.

# Սահմանադրական փոփոխություններ Վրաստանում

**Երեկ Վրաստանի խորհրդարանը երրորդ ընթերցմամբ ընդունեց «Վրաստանի սահմանադրությունում փոփոխություններ եւ լրացումներ» կատարելու օրինագիծը: Համաձայն, փաստորեն, նոր սահմանադրության՝ Վրաստանի նախագահի լիազորությունները որոշակիորեն կնվազեն ի հաշիվ կառավարության՝ ի դեմս վարչապետի լիազորությունների մեծացման: Լրացումները նաեւ նախատեսում են երկրի դատական համակարգի անկախության խորացում:**

**Նոր սահմանադրությանը կողմ են քվեարկել Վրաստանի խորհրդարանի 150 պատգամավորներից 112-ը, դեմ՝ հինգ պատգամավոր:**

Հ. Ա.

## ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔ

Ամերիկյան դեսպանատունը կազմակերպում է գրասենյակային ու բնակարանային կահույքի, մեքենաների, համակարգիչների եւ այլ ապրանքների աճուրդային վաճառք, որը տեղի կունենա **հոկտեմբերի 23-ին** Ամերիկյան փողոց 1 հասցեում **ժամը 10-19-ը:** Ապրանքները կարող եք զննել տեղում վաճառքին նախորդող ուրբաթ օրը, հոկտեմբերի 22-ին ժամը 10-19-ը: Զննումն անվճար է:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել www.usa.am էջի հայտարարությունների բաժինը:

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

**Հայաստանի ամերիկյան համալսարան
Քաղաքագիտության եւ միջազգային
հարաբերությունների ֆակուլտետ**

**Պարոն Ռոբերտ Սմոլիկը**

ներկայացնում է

**Հակակոռուպցիոն քաղաքականությունը
եւ ճիշտ կառավարումը**

դասախոսությունը

**Երեքշաբթի, հոկտեմբերի 19-ին, 18:30**

Պարոն Ռոբերտ Սմոլիկը դիվանագետ է, արտաքին քաղաքականության մասնագետ, ինչպես նաեւ եվրոպական ու աֆրիկյան ամբիոններից ելույթներով հանդես եկող դասախոս: Պարոն Սմոլիկը միջմշակութային հաղորդակցության, ժողովրդավարության ու կառավարման, ինչպես նաեւ տնտեսական զարգացման մասնագետ է: Վերջերս նա աշխատել է Միչիգանի համալսարանում (Անն Արբոր), եղել է ԱՄՆ-ի փոխդեսպան Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպությունում, հանդիսացել է Եվրոպայի տարածաշրջանի գծով ավագ խորհրդատու ՄԱԿ-ում ԱՄՆ-ի ներկայացուցչությունում: Պարոն Սմոլիկը զբաղեցրել է բազմաթիվ բարձր պաշտոններ ԱՄՆ-ի Պետդեպարտամենտում. եղել է Տնտեսական գծով ղեկավար եւ դեսպանի պաշտոնակատար ինչպես Կանադայում ԱՄՆ-ի դեսպանատանը, այնպես եւ Իտալիայում ԱՄՆ-ի դեսպանատանը: Նրա դասախոսությունների թեմաներն են՝ ճիշտ կառավարումն ու հակակոռուպցիոն քաղաքականությունը, տնտեսական զարգացումը եւ ահաբեկչության ֆինանսավորման հակազդեցությունը: Պարոն Սմոլիկն ստացել է մագիստրոսի կոչումներ Հարվարդի համալսարանում եւ Կալիֆոռնիայի համալսարանում (Բեռկլի): Պարոն Սմոլիկը Հայաստանում է ԱՄՆ-ի դեսպանատան հրավերքով:

**Մուտքն ազատ է
Հայաստանի ամերիկյան համալսարան
«Պարամազ Ավեդիսյան» մասնաշենք
Մանուկյան դահլիճ (106E, 1-ին հարկ)**

***Դասախոսությունը կընթանա անգլերենով՝ հայերեն համընթաց թարգմանությամբ
Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել
Քաղաքագիտության եւ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ՝ 51-26-77***

www.accea.info

**ՆՈՐԱՐԱՐ ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԿԵՆՏՐՈՆԸ**
*Ներկայացնում է*

սեպտեմբեր 2 - հոկտեմբեր 30, 2010
**ԲԱԶՄԱՇԵՐՏ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ
ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑ**
Ցուցահանդեսի համադրող ՍՈՆԻԱ ՊԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԸ
Ներկայացված երիտասարդ, խոստումնալից արվեստագետների աշխատանքներով

սեպտեմբեր 15 - հոկտեմբեր 15, 2010
**ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ
ՎՌԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ - ՇԱՔԵ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ՄԵԿ ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ
թատերական V փառատոն**, 8-15 նոյեմբեր, 2010
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
1. Խաղը՝մեկ քառակուսի մետր բեմի վրա:
2. Տևողությունը՝մինչև 45 րոպե:
3. Ժանրի, ձևի, կերպարների սահմանափակումներ չկան:
Մասնակցության հայտերի վերջնաժամկետն է՝15.10. 2010

ՄՈՒՏՔՆ ԱԶԱՏ Է
Այցելություն ամեն օր բացի կիրակի եւ երկուշաբթի, ժամը 11:00-17:00
**Փավստոս Բյուզանդի 1/3 (Վերնիսաժի հարավ) հեռ. 568225**

Ռիելտոր «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «ԱԴԱՄԱՆԴ» ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող գույքերի աճուրդային վաճառքը՝

-Այգ. հողամաս, ընդ. մակ.՝ 0,29 հա եւ այգետնակ՝ 433,7 քմ: Հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Ջրվեժ այգետարածք, 1-ին թաղ., թիվ 41,42 այգ. հողամաս: Մեկն. գինը՝ 85000000 դրամ:

-Այգ. հողամաս, ընդ. մակ.՝ 0,0475 հա, այգետնակ՝ 152,15 քմ, ծածկարան՝ 7,8 քմ եւ ջրավազան՝ 5,6 քմ: Հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Ձորաղբյուր այգետարածք, 19 թաղ., թիվ 7 այգ. հողամաս: Մեկն. գինը՝ 18500000 դրամ:

-Ավտոտնակ, ընդ. մակ.՝ 15.4 քմ: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն համ., Ա. Տիգրանյան փող., 5 շ., թիվ 7 ավտոտնակ: Մեկն. գինը՝ 4000000 դրամ:

-Ավտոտնակ, ընդ. մակ.՝ 37.7 քմ: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն համ., Մ. Ավետիսյան փող., 11 ա շ., թիվ 7 ավտոտնակ: Մեկն. գինը՝ 4200000 դրամ:

-Հողամաս, ընդ. մակ.՝ 0.0035 հա եւ 35 քմ խանութ-սրահ: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն համ., Պ. Սեւակի փող., թիվ 53/2 հողամաս: Մեկն. գինը՝ 20000000 դրամ:

-Բնակարան, ընդ. մակ.՝ 59.4 քմ: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն համ., Մ. Ավետիսյան փող., 2-րդ փող., 11 ա շ., բն. 18: Մեկն. գինը՝ 23500000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 16.11.2010թ-ից մինչեւ 01.03.2011թ. յուր. աշխ. օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտերը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեներում յուր. օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել **www.borsa.am**:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 15.10.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: